



# Պ Ա Տ Մ Ա - Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ՊՐՈՑ. Է. ԱՃԱՌՑԱՆ

## Մ Ե Ս Ր Ո Պ Մ Ա Շ Տ Ո Ց\*

Գ Լ ՈՒ Ե Գ Ա Ս Ե Զ Ի Լ Գ Ե Ր Ո Ր Դ

### ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### § 1

Վերը, տասնմեկերորդ գլխում, խոսելով Ծ դարի գրական շարժման վրա, տեղ-տեղ ցույց տվինք այն գրական մեծ գործակցությունը, որ Մեսրոպ ցույց տվեց Ս. Գրքի և ուրիշ եկեղեցական գրքերի թարգմանության մեջ: Բայց այս տեղեկությունները ավելի ընդհանուր բնույթ ունենալով, ներկա գլխով ուզում ենք խոսել Մեսրոպի աշխատությունների վրա մասնավորապես, քննելով յուրաքանչյուրը առանձին, հիշատակել, թե ի՞նչ գործեր վերագրվում են իրեն և թե սրանցից որո՞նք են ստույգ:

Ինչպես արդեն գիտենք, Մեսրոպի առաջին աշխատությունն է Առակաց գրքի թարգմանությունը, որ միանգամայն հայ գրականության մեջ գրված առաջին երկասիրությունն է և որ Մեսրոպ կատարեց իր երկու հասուն աշակերտների՝ Հովհանն Եկեղեցացու և Հովսեփ Պաղնացու ընկերակցությամբ:

Առակաց գիրքը, որ Սողոմոն իմաստունի չորս երկասիրություններից գլխավորն է, միջակ մեծությամբ մի տետրակ է, որ պարունակում է մտավորապես 40 ութածալ էրես: Աշխատությունը բաժանված է երեք մասի, որոնք ընդամենը ունեն 31 գլուխ:

\* Նարունակված ռեչիսիան առաջին 1954 թվականի XI, XII, 1955 թվականի I, II, III, IV, IX, 1956 թվականի I, II, IV-V, VII-IX, XI-XII, 1961 թվականի Ժ, ԺԱ, ԺԲ և 1962 թվականի Ա շտաբներից:

1750 համարով: Պարունակում է թարգմանված խրատներ, ուղղված ամեն դասի մարդկանց, նրանց սրտում առաքինության սերմերը ցանելու և շարության որոմը արմատախիլ անելու նպատակով: Գրվածքն ունի այնպիսի հեշտ ու դյուրասահ ոճ, որով ամեն ընթերցողի համար պարզ ու հասկանալի է դառնում: Մեսրոպ իր թարգմանության մեջ քանացել է նյութին և հեղինակի նպատակին համապատասխան լեզու գործածել: Նա այնպիսի մի լեզու ունի, որ ամեն զարգարանքից ու պճնությունից հեռու, հանդարտ հոսող առվակի նման, հեղիկ ու հեշտասահ ընթանում է: Ավելի փափուկ քան Սասյա և Սրբմիայի մարգարեությանց լեզուն, ավելի նուրբ և ավելի վայելուչ քան Մենդոց և Ավետարանի թարգմանությունը, այս երկուսի միջև՝ բռնում է միջին ճանապարհ:

Մանթաքցնելու համար ընթերցողին Մեսրոպի սույն հարազատ լեզվին, բերենք մի կարճ օրինակ գրքի հենց սկզբից-

«Ճանաչել գիմաստութիւն և զխրատ, իմանալ զրանս հանճարոյ, ընդունել զդարձուածս բանից. ի միտ առնուլ զարդարութիւն ճշմարիտ և ուղղել զիրաւունս: Զի տացէ անմեղաց զխորագիտութիւն, մանկանց տղայոց զմիտս և զհանճար: Որոց իրն լուիցէ իմաստունն՝ իմաստագոյն լիցի, իսկ որ հանճարեղն իցէ՝ զառաջնորդութիւն ստասցի: Ի միտ առցէ զառակս և զբանս խորիս, զճառս իմաստնոց և զառակս նոցա, Սկիզբն իմաստութեան երկիւղ Տեառն. հանճար բառի ամենեցուն որ սու-

նեն զնա. պաշտօն բարի առ Աստուած՝ սկիզբն զգոնութեան. զիմաստութիւն և զխրատ ամպարիշտք անգոնեն: Լո՛ւր, որդեակ, խրատու հօր քոյ, և մի՛ մերժե՛ր զօրէնս մօր քո, զի պսակ շնորհաց ընկալցի զյուխ քո և մանեակ ոսկի ի պարանոցի քումս:

§ 2

Առական գրքի թարգմանութիւնից հետո Մեսրոպին է ընծայվում նաև ամբողջ Ս. Գրքի թարգմանութիւնը (Հին և Նոր Կտակարանները), որ իբր թե կատարել է նա Մամուսատ եղած ժամանակ, իր Հովսեփ և Հովհանն աշակերտների հետ: Այսպիսի տեղեկութիւններ տալիս է նախ հորինացի (Գ ծգ). և ահա իր բառերը. «Հանգերձ Հոռփանոսի կերպածեալ զգիրն Մեսրոպայ... Եւ իսկույն ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսանելով յԱռական, քովանդակ զքսան և երկու յայտնիսս և զնոռ Կտակս յեղու ի հայ բան, նա և աշակերտք նորա Յոհանն Եկեղեցացի և Յովսէփ Պաղնացի»: Թեև Կորյուն այսպիսի բան չգիտեմ, բայց Փոքր Կորյուն, հետևելով հորինացուն, նույնն է ավանդում, միայն փոխանակ Նոր Կտակարանի՝ Հինը հիշելով. «Եւ իսկույն ի թարգմանութիւնս ձեռնարկեալ խորհրդաբար սկսանելով յԱռական իմաստնուն Սողոմոնի, քովանդակեալ զքսան և երկուս յայտնիսն, զՀին Կտակարանսն յեղու ի հայ բան» (էջ 11):

Այս տեղեկութիւնը, որ հակասում է Ս. Գրքի թարգմանութիւն քոյոր հանգամանքներին, պետք է համարել, թե քոյորովին սխալ է: Ապա թե ոչ պետք պիտի լինի ընդունել, թե Ս. Գիրքը հայերեն թարգմանված է երեք անգամ. առաջինը Մեսրոպի ձեռքով (Սամուսատի այս թարգմանութիւնը), երկրորդը Սահակի ձեռքով, Մեսրոպի Ազվանք քարոզութիւն զնացած ժամանակ (հորինացի, Գ ծգ՝ «Եւ զտանէ զմեծն Սահակ թարգմանութեան պարպեալ յասորոյն՝ յոչ լինելոյ յունիս») և երրորդ՝ թարգմանիչների վերագրծին՝ Եղնիկի ընկերակցութեամբ (հորինացի գ կա): Բայց թե այսպիսի մի ենթադրութիւն հակառակ է նույնիսկ հորինացուն, հայտնի է իր վկայութիւնից, որ վերջին թարգմանութիւնն առթիվ խոսելով ասում է. «Երբձեալ թարգմանեցին զմի անգամ թարգմանեալն» (Գ կա), Եթե մի՛ անգամ էր թարգմանված առաջ, ուրեմն Սամուսատի ենթադրյալ թարգմանութիւնը գոյութիւն չունի: Եվ ինչպե՞ս կարող էր Մեսրոպ այնպիսի երկարատև մի աշխատութիւն ձեռնարկել և կատարել այնքան կարճ ժամանակում որ մնաց Սամուսատում, երբ գի-

տեր, թե Հայաստանի մեջ ակնդէտ իր վերագրծին էին սպասում թագավորը, Սահակ և ամբողջ ուսումնադուրկ, բայց ուսումնատենչ ժողովուրդը: Պարզ է, որ միայն Առական գրքի թարգմանութիւնը տեղիք է տվել հորինացուն՝ ամբողջ Ս. Գիրքը միասին թարգմանված կարծելու: Ինչ թվում է, թե հորինացու այս թուրիմացութիւնը հոգեբանական է. Կորյուն ասել էր. «Եւ եզեալ սկիզբն յԱռական Սողոմոնի», որ հորինացին էլ կրկնում է ուրիշ բառերով՝ «խորհրդաբար սկսանելով յԱռական»: Երբ մեկը մի բան սկսում է, պիտի վերջացնի. ահա թե ինչու հորինացին ամբողջ Ս. Գիրքը միասին թարգմանված է կարծել:

Մայիսայան, թարգմանութիւն հորինացու պատմութիւն, ծանոթ. 315, կարծում է, թե հորինացու պատմութիւն այս տողը՝ «քովանդակելով զքսան և երկու յայտնիսն և զնոր Կտակս յեղու ի հայ բան», լուսանցագրութիւն է, որ հետո մտել է քննարկի մեջ: Ավետարանի առժամանակյա թարգմանութիւն մասին (Մեսրոպի ձեռքով) խոսել ենք արդեն, իսկ իր անորոշ գործակցութիւն մասին Ս. Գրքի լիակատար թարգմանութիւն, ինչպես և Ծ դարի մյուս զրական արտադրութիւնց մեջ, տես տասներորդ և տասնմեկերորդ գլուխները:

§ 3

Սահակի և Մեսրոպի աշխատակցութիւն արդյունք են համարվում Հայ Եկեղեցու ծիսական հինգ կարևոր գրքերը, որոնք են ժամագիրք, Պատարագամատուց, Երարկնոց և Մաշտոց Այսպես, օրինակ՝ Գամլյան, «Պատմութիւն Հայոց», Ա 510:

Այս քոյորի մեջ ամենազիսավորն է Մաշտոցը կամ Միսարանը, որ Հայաստանյայց Եկեղեցու ծիսակատարութիւն համար ամենամեծ նշանակութիւն ունի:

Այս գրքի հեղինակի մասին երկու տարբեր ավանդութիւններ կան. առաջինը, որ վենետիկյան դպրոցի և առհասարակ քոյոր հին բանասերների կարծիքն է, ենթադրում է, թե Մաշտոց գրքի հեղինակը Մեսրոպն է: Իսկ երկրորդը, որ ավելի նոր ու քննադատ բանասերների կարծիքն է, այս աշխատութիւնը ընծայում է Թ դարի մատենագիր Մաշտոց կաթողիկոսին: Առաջին կարծիքը թեև շատ ավելի տարածված, սակայն չի հիմնվում մի հին պատմական վկայութիւն վրա. ո՛չ Կորյուն, ո՛չ Փարպեցի, ո՛չ հորինացի և ո՛չ էլ սրանց մոտ կամ հետո ապրած մի հեղինակ այս մասին չի տալիս որևէ տեղեկութիւն. և հայտնի չէ ինձ, թե նոր հեղինակները ի՞նչ վկայութիւն վրա հիմնելով, պնդում են այս կարծիքի վրա:

Արքարն, Գամշյան, «Պատմութիւն Հայոց», Ա, էջ 769 և Զարբհանալյան, «Պատմութիւն Հայ դպրութեան», Բ, էջ 492, այս կարծիքը ապացուցանելու համար վկայութիւն են կոչում Շնորհալու «Առ Միշագետացիս» գրած թուղթը: Բայց թե այս թուղթը հակադրած է ապացուցանում, կտեսնենք քիչ ձեռոտ: Երկրորդ կարծիքը հաստատող հին պատմական վկայութիւններ շատ կան: Այսպես նախ Կիրակոս Գանձակեցի, որ (էջ 45), խոսերով Մաշտոց կաթողիկոսի վրա, ի միջի այլոց ասում է. «Սա կարգեաց զգիրսն որ րատ իր անուանն Մաշտոց կոչի, ժողովեալ զամենայն կարգեալ ազօթս և զընթերցուածս ի միասին յարմարեալ յաւելուածով յիրմէ, որ ունի յինքեան զամենայն կարգս հաւատոյ քրիստոնէութեան»:

Երկրորդ վկայութիւնը տալիս է «Յայսմատուրք»-ը՝ Սահմի Գ=հոկտեմբերի 13, «Վարք և յիշատակ սուրբ Հայրապետին մերոյ Մաշտոց վարդապետին»: Պատմում է, թե նույն անձը... լեալ 60 ամաց՝ եղև կաթողիկոս. և եկաց տարի մի յաթոռն հայրապետական և վախճանեցաւ ի գեղաքաղաքն Գառնի, ու եղաւ պատուով մօտ ի հովանոց արքային Տրդատայ, ի բերդն Գառնույ 982 (-897) թուին: Այս վարդապետս Մաշտոց ընդ բարի վարուց առաքինութեանն իւրոյ, արար և բազում ուղղութիւնս կարգաց և կրօնից Եկեղեցույ, մի ժողովեաց զկարգեալսն յառաջին սրբոցն, և զթերին ինքն ելից յաստուածատուր շնորհաց իւրոց, և եդ ի միում տփի: Զկարգն Մկրտութեան և զՊսակին, զՀաղորդութեան և զՊատմանն, զՀոգեհանգիստն և զհաշօրհնեանն, զՍերժօրհնէն և զԷղջ, զԿալ և զհնձան, զհորս և զկարաս, զՋրօրհնէն և զՍտեփանոսայն, զՀիմնարկէքն և զԵկեղեցի օրհնօքն, զաւաղանին և զպղծեալ տաճարին, զՁեռնադրութիւնն և զՔահանաթաղն, և զայլն ամենայն, որովք վարին մերս կարգաւորութիւն: Վասն որոյ և անուն գրոցն Մաշտոց կոչեցաւ, զի նորին աշխատասէր կամօքն ի մի վայր ժողովեցաւ»:

Երրորդ վկայութիւնը տալիս է Ներսէս Շնորհալու թուղթն առ Միշագետացիս (տե՛ս Շնորհալու «Թուղթ ընդհանրական», տպ. էջմիածին, 1865, էջ 333—400): Այս թղթում միշագետացի ասորիների արած զանազան առարկութիւններին պատասխանելուց հետո, Շնորհալին անցնում է խոսել Մաշտոց գրքի մասին, այսպես. «Շուրք դարձեալ՝ զի ոմանք ի մուրք քահանայից զժամկեալ զարշահոտ պղծութիւն անիծելոյն Սմբատայ Քոնդրակեցույ վերստին շարժեն ի կործանումն լսողացն ասելով, եթէ եկեղեցի ո՛չ շինեալն է ի մարդկանէ, այլ մեք միայն, և Մաշտոցն գիրք և որ ի նմա կարգեալք են խալ օրհնել և եկեղեցի և այլքն ոչ են ըն-

դունելի (էջ 373)... Իսկ այն՝ զի զցուցակն ընդունելի, որպէս թէ ոչ ի նախնի հարցն, այլ ի վերջում ժամանակի ի Մաշտոցէ ումեմնէ ասացեալ և եղեալ է, սուտ են և ո՛չ ճշմարիտ: Քանզի ամենայն կարգեալքն ի նմա ի յառաջին հարցն հաստատեալք էին. է որ ի մերոց լուսատուրչացն, և է որ յայլոց ազգաց հայրապետաց, որպէս և են իսկ որոշմեալ իւրաքանչիւրոցն անուանք ի սկիզբն ցուցակին: Իսկ երանելին Մաշտոց գրածանեալ կանոնսն ի միմեանց ի մի դիրս հաւաքեաց, վասն որոյ և նոյն գիրք յանուն նորա ասացեալ լինին: Բայց թէ և նմին իսկ Սրբոյն Մաշտոցի էին ասացեալ ամենայնքն, զի՛նչ պատճառաւ են անընդունելի. կամ ցուցցեն զվնասն որ ի նմա, և կամ յայտնի առնեն զանձինս, թէ հակառակ են Քրիստոսի և օրինաց նորա...» (էջ 380):

Շնորհալու այս վկայութիւնը փարատում է ամեն կասկած և հաստատ կերպով ցույց է տալիս, թե Մաշտոց գրքի մեջ գտնված կանոնները թեև առանձին կազմված են զանազան հայրապետներից, բայց նրանց կարգավորութիւնը և մի գրքի մեջ ամփոփումը եղել է Մաշտոց կաթողիկոսի ձեռքով սի վերջում ժամանակիս: Զարբհանալյան սխալ հասկանալով Շնորհալու այս բոլորովին պարզ խոսքերը (էջ 492), ասում է, թե «Սուրբն Ներսէս Շնորհալի, որ առ Միշագետացիս գրած թղթույն մեջ հայտնապես կըրուցե, թե որչափ անտեղի է այս կարծիքը» (Միսարանը Մաշտոցին և ո՛չ Ս. Մեսրոպին ընծայելը): Զարբհանալյան սխալվում է անշուշտ Շնորհալու սի Մաշտոցէ ոմեմնէ ասացեալ և եղեալ է, սուտ են և ո՛չ ճշմարիտս բառերից: Բայց զժբախտարար Շնորհալին այս բառերով Մաշտոցի հեղինակ լինելն է միայն մերժում և ո՛չ ընամ վեր կարգավորութիւնը, որ հետո ավելի ընդարձակ բացատրում է:

Մեսրոպին կողմնակից կարելի էր համարել Մաշտոց կաթողիկոսի կենսագրութիւնը, որ գրել է իր աշակերտը Ստեփանոս վարդապետ Սեանեցի (տե՛ս Զարբհանալյան, «Պատմութիւն Հայ դպրութեան», Բ, էջ 514): Այս կենսագրութիւնը գտնվում է էջմիածնի ձեռագրերից մի քանիսի մեջ. ինչպե՛ս՝ Կարինյան № 957, էջ 614—617, Գևորգյան № 100, էջ 582—583, Գևորգյան № 97 և այլն. տպված է նաև Գ. Տեր-Պողոսյանի «Էւոն Շանթի» շէրն աստվածները-ը և Ստեփանոս վանականի հիշատակարանը աշխատութիւն մեջ (Շուշի, 1913): Բայց այս կենսագրութիւն մեջ ակնարկութիւն անգամ չկա այն մասին, թե Մաշտոց կաթողիկոսն է եղել Մաշտոց գրքի կարգավորելը: Այս պարագան անշուշտ շատ զարմանալի է. բայց զարմանքը կվերանա, երբ նկատենք, թե

կենսագրութիւնը դրված է այն ժամանակ, երբ Մաշտոց դեռ 60 տարեկանից պակաս էր, ինչպես հիշվում է նույն կենսագրութիւն մեջ, և հետևաբար դեռ կաթողիկոսն էլ չէր ընտրւած. մինչդեռ մենք գիտենք, թե Մաշտոց գրքի հորինումը եղած է նույն հայրապետի կաթողիկոսութեան ժամանակ:

Այժմ անցնենք քննել մտտիկից բուն Մաշտոց գիրքը, որով նոր փաստեր պիտի ունենանք շոշափելի կերպով մերժելու հին ձևի ենթադրութիւնները:

Արդի գործածութեան մեջ Մաշտոցը երկու տեսակ էր՝ Մեծ կամ Մայր Մաշտոց և Փոքր Մաշտոց, որ իր սովորական գործածութեան պատճառով հասարակաբար կոչւում է պարզապես Մաշտոց:

Մեծ կամ Մայր Մաշտոցը պարունակում է հետևյալ 45 գլուխները, որոնք կոչվում են կանոն.

1. Կարգ մկրտութեան (բուն մկրտութիւն, ութօրէք և քառասներեայք).
2. Կանոն նորոգ սափրելոյ զհերս.
3. Կանոն նշան տալոյ և օրհնելոյ.
4. Կանոն կուսի պսակին և Կանոն պսակ վերացուցանելոյ.
5. Կանոն երկրորդ պսակի.
6. Կանոն հաղորդ տալոյ հիւանդաց.
7. Կանոն գիշերածամու աղօթի (ծանր հիւանդների վրա կարգացվելիք աղօթքներն են. համեմատութեամբ նախորդի՝ շատ ավելի ընդարձակ).
8. Կանոն խաչալուռայ առնելոյ.
9. Հոգեհանգիստ մեռելոց.
10. Կանոն աղ օրհնելոյ.
11. Կանոն մատաղ օրհնելոյ.
12. Կանոն հաւ օրհնելոյ.
13. Կանոն ջրհոր օրհնելոյ.
14. Կանոն զսերմանիս օրհնելոյ (արա, հունձ, կալ, հնձան).
15. Կանոն խաչ օրհնելոյ.
16. Կանոն նկարեալ եկեղեցի և պատկեր օրհնելոյ և օծելոյ.
17. Կանոն սկիհ և մաղղմայ օրհնելոյ.
18. Կանոն եկեղեցւոյ զգեստ օրհնելոյ.
19. Կանոն նոր գիրք օրհնելոյ.
20. Կանոն նորաւարտ աշակերտ օրհնելոյ.
21. Կանոն դժուարածին լղի կնոջ.
22. Կանոն փարատելոյ զփոս նորածին մանկանց.
23. Կանոն թացեղէն պղծեալ օրհնելոյ.
24. Կանոն խունկ օրհնելոյ.
26. Կանոն վասն այսահարաց և լուսնտտից.
25. Կանոն վասն բարձման երաշտի.
27. Կանոն թուղման նշեցելոց (այգուց, հօթնաւոր).

28. Կանոն տղայաթաղի (այգուց, հօթնաւոր).
  29. Շարականք Հանգստեան.
  30. Աւետարանք բժշկութեան.
  31. Աղօթք բժշկութեան.
  32. Հիմնարկէք եկեղեցւոյ (հիմնարկութիւն, նաւակատիք և օծումն).
  33. Կանոն եկեղեցւոյ աւազան օրհնելոյ.
  34. Կանոն զպղծեալ տաճարն սրբելոյ.
  35. Կանոն եկեղեցւոյ նոր դուռ օծելոյ.
  36. Կանոն ժամահար օրհնելոյ.
  37. Կանոն ապաշխարութեան մեղուցելոց.
  38. Կանոն օրհնութեան և ձեռնադրութեան հօթն աստիճանաւորաց եկեղեցւոյ (1. սաղմոսերգուք, աւելածուք, դռնապանք, 2. րնթեքոցք, 3. երգմնեցուցիչք, 4. քահանայք, 5. կիսասարկաւազունք, 6. աւագ սարկաւազունք, 7. քահանայք և արեղայք).
  39. Կանոն մասնաւոր իշխանութեան 4 աստիճան զաւազանի.
  40. Կանոն ծայրագոյն իշխանութեան 10 աստիճան զաւազանի.
  41. Կանոն ձեռնադրութեան եպիսկոպոսաց.
  42. Քահանայաթաղ.
  43. Կանոն օրհնութեան Ս. Միստնի.
  44. Կանոն ձեռնադրութեան կաթողիկոսաց.
  45. Կանոն օծման թագաւորաց:
- Մայր Մաշտոցի զանազան տպագրութիւնները կարող են հիշյալ 45 գլուխներից մի երկուսը հապաված լինել. այսպէս օրինակ (41) «Կանոն ձեռնադրութեան եպիսկոպոսաց», (43) «Կանոն օրհնութեան Ս. Միստնի», (44) «Կանոն ձեռնադրութեան կաթողիկոսաց», և վերջապես (45) «Կանոն օծման թագաւորաց»: Այս կանոնները կարող են կազմել նաև առանձին հատոր՝ «Գիրք կամ Մաշտոց ձեռնադրութեան անունով: Բայց լիակատար Մայր Մաշտոցը պետք է որ բոլոր կանոններն էլ պարունակի:
- Փոքր Մաշտոցում գտնվում են վերի 45 գլուխներից միայն այն կանոնները, որոնք ամենօրյա գործածութեան մեջ պետք են. ինչպես Մկրտութեան, նշանադրութեան, Պսակի, Թաղման և ուրիշ կարգեր: Առհասարակ 1—31 կանոնները կարող են մուտք գործել Փոքր Մաշտոցի մեջ. իսկ Փոքր Մաշտոցը ամբողջովին պարփակվում է Մայր Մաշտոցում:
- Թեև Մաշտոցի կազմակերպութիւնը սովորաբար Մեսրոպին կամ Մաշտոց կաթողիկոսին է ընծայվում, սակայն կանոնների մեջ կան մի քանիսը, որոնք առանձին հեղինակի անուն ունեն և հետևաբար լին կարող այս երկուսից լինել: Այսպես են (31) «Աղօթք բժշկութեան», որ Գրիգոր Նարեկացու հեղինակութիւնն է՝ նարեկից հանված. (32)

Հիմնարկեք եկեղեցւոյ, որ կազմել է նախ Զովհան Մանդակունի, իսկ հետո էջմիածնի միաբան Մինաս արքեպիսկոպոսոսը նոր փոխադրութիւններով ձեւավորել է (Հմմտ. Մալր Մաշտոց, տպ. Պոլիս, 1807, էջ 155), (39) Եկանոն մասնաւոր իշխանութեան 4 աստիճան գաւազանի Գրիգոր Տաթևացու աշխատութիւնն է, Մնացյալները թեև Մաշտոցու ատանէին հեղինակի անուն չեն կրում, բայց նրանց մեծ մասը Երևանի հեղինակներն են, այսպես՝ (1) Եկարդ Մկրտութեանն և (4) Կարգ պսակադրութեանն ընծայվում են Զովհան Մանդակունուն, (8) Եկանոն խալալուայ ատնելոյ՝ կազմել է Ս. Բարսեղ, իր հայրապետութիւն հինգերորդ տարում, Կապադովկիայի Կեսարիա քաղաքում և Խորով թարգմանիլ բերել է Երուսաղեմից, (9) Զոգեհանգստի կարգը կազմել է Ս. Օփրեմ ասորի, Նիկոմիդիայի քաղաքում, իր հայրապետութեան երկրորդ տարում, որ Ղազար Փարպեցիին բերել է Հայաստան, (10) Եկանոն աղ օրհնելոյ կազմել է Զուտոս Եպիսկոպոս, (14) Եկանոն զսերմանիս օրհնելոյ կազմել է Գրիգոր Աստվածաբան, որ իր թե Մովսես Խորենացիին բերել է Հայաստան, (15) Եկանոն խալ օրհնելոյ՝ Մանդակունուն է, (16) Եկանոն նկարեայ եկեղեցւոյ Գրիգոր Լուսավորչին է ընծայվում, (17) Եկանոն սկիզ և մաղզմայ օրհնելոյ և (18) Եկեղեցւոյ զգեստ օրհնելոյ Զովհան Մանդակունուց են, (27) Եկանոն թաղման նշեցելոց կազմեց Ս. Սահակ Վաղարշապատում, (32) Ելիմարկեք եկեղեցւոյ, (33) Եկանոն եկեղեցւոյ արագ օրհնելոյ, (34) Եկանոն զպօծնայ տաճարն սրբելոյ Զովհան Մանդակունուց են, (35) Եկանոն եկեղեցւոյ նոր դուռ օծելոյ Լուսավորչից է, (36) Եկանոն ժամհար օրհնելոյ Զովհան Մանդակունուց է, (37) Եկանոն ապաշխարութեան մեղուցելոց կազմել է Կյուրենդ Երուսաղեմացիին իր հայրապետութեան 21-րդ տարին, Երուսաղեմում, որ Կորյուն և Ընձակ թարգմանիլները Հայաստան բերին, (38) Եթօթն աստիճանաւորաց ձեռնադրութեան կանոն-ի մեջ ընթերցողների և կիսասարկավազների կարգը կազմել է Լուսավորիչը, իսկ քահանա օրհնելու կարգը կազմել է Ս. Սահակ, իր հայրապետութեան 21-րդ տարին, (42) Եթահանայաթաղ-ը նույնպես Ս. Եփրեմից է, որ Ղազար Փարպեցիին բերավ Հայաստան, իսկ հետո Ս. Սահակ ավիւացրեց յոթը Ավետարանները:

Այս ավանդութեանց մեծ մասը անշուշտ անվավեր է. այսպես օրինակ՝ (14) Խորենացու Եթրմնօրհնէք-ը, (16), (35) և (38) Լուսավորչին ընծայված մասերը և վերջապես (42) Եթահանայաթաղ-ը, որ Փարպեցիին

է բերել, իսկ հետո Ս. Սահակ ավիւացրել է 7 Ավետարանները, մինչդեռ գիտենք, որ Փարպեցու դարձած ժամանակը Սահակ վախճանված էր արդեն: Մյուսների մեջ էլ դեռ անվավեր բաներ շատ կան. բայց համենայն դեպս, եթե նշանակված հեղինակներին չեն, Ս. Մեսրոպին ընամ չեն կարող լինել: Ընտին պիտի լինեն նաև (44) Եկանոն ձեռնադրութեան կաթողիկոսաց և (45) Եկանոն օծման թագաւորաց, քանի որ Մեսրոպի օրով արդեն թագաւորութիւնը շնչվելով կարիք չպիտի զգացվեր Եթագաւորհնէք կազմելու կամ Ս. Սահակ տակավին կենդանի լինելով՝ Մեսրոպ չպիտի համարձակվեր Եկաթողիկոսօրհնէք պատրաստելու: (40) Եկանոն ծայրագոյն իշխանութեան նույնպես շատ հետին պետք է լինի, որովհետև ծայրագոյն իշխանութեան կոչումն արդեն հետին է. այս կանոնը պետք է համարել իրեն շարունակութիւն (39) Եկանոն իշխանութեան կանոն-ին, և հետևաբար ձեւված Գրիգոր Տաթևացու ավելի հետո, նմանապես (2), (11), (12), (13), (19), (20), (23), (24) շատ հասարակ բաներ լինելով, ըստ ինքյան կրում են հետևութեան դրոշմը և չեն կարող Մեսրոպի գործը լինել: Անվայել է դրանք Մեսրոպին վերագրել: Մնացյալներից (3) պետք է կցել (4) Եկուսի պսակ-ին, որովհետև անկարելի է ենթադրել պսակադրութիւն ատանց նշանադրութեան, (29) Եթարականք Զանգատեան լուսննայով ընամ ոսկեդարյան լեզու, չեն կարող լինել ոչ Մեսրոպից և ոչ էլ Ոսկեդարի որևէ հեղինակից, (30) Անեսարանք բժշկութեան Ավետարանից հանված գլուխներ են և չեն կարող լինել ոչ մի նորութիւն, ըստ ինքյան իրավունք լուսնն ատանէին կանոն կազմելու վերջապես թվում է, թե (43) Եկանոն օրհնութեան Ս. Միլոնի Եթարոպի ձեռնհասութիւնից բարձր էր, ուստի պետք է որ ավելի հետո նստող հայրապետներից մեկի աշխատութիւնը լինի: Նույն պատճառաբանութեամբ կարող ենք մերժել նաև (41) Եկաթողիկոսական ձեռնադրութեան կանոն-ը:

Եթե բոլոր այս նշանակված կանոնները դուրս հանենք, կմնան միայն 5, 6, 7, 21, 22, 25, 26 և 28 կանոնները, որոնք կարող ենք հակառակ պարագային Ս. Մեսրոպին բնթագրել:

Բայց կարելի՞ էր միթե այսպիսի փոքր աշխատութեան համար ամբողջ Մաշտոցի կազմութիւնը Ս. Մեսրոպին ընծայել: Իհարկե ոչ: Այն անձը, որ Մաշտոցի հեղինակ կամ խմբագիր տիտղոսն է կրում, եթե նրա մեծագույն մասի հեղինակը չէ, պետք է որ գոնե հավաքած, դասավորած և վերջին ձեռքից անցկացրած լինի այն կանոնները, որոնք իրենից առաջ գոյութիւն ունենին

իրրև աշխատութիւն զանազան հեղինակներին Այսպիսի մի անձնավորութիւն քաղաքական ուշ ժամանակ ապրած պիտի լինի, այսինքն այնպիսի մի ժամանակ, երբ Ս. Սահակ, Հովհան Մանդակունի, Ղազար Փարպեցի, Կորյուն, Խորենացի և այլն, որոնք Մաշտոցի զանազան կանոններին հեղինակ են համարվում, շատոնց արդեն վախճանված էին: Արանից հետևում է, թե Մեսրոպ չի կարող Մաշտոցի խմբագիրը լինել, բայց Մաշտոց կաթողիկոս, որ հիշատակված բոլոր հեղինակներից հետո է, ամենայն հրավամբ կարող է խմբագրի պայմանները լրացնել, ԾԹ նարեկացին և Տաթևացին էլ ավելի հետո են քան Մաշտոց կաթողիկոսը, իրենց գրածներն էլ հետին հավելվածներ են Մաշտոցի մեջ, որոնք մնացյալի ամբողջութիւնը բնավ չեն խանգարում:

Մեսրոպի հեղինակ լինելու դեմ իրրև վերջին ապացույց կարելի է հիշել մանավանդ Մաշտոցի լեզուն: Մաշտոցի բոլոր կանոններն էլ պարունակում են վեց տեսակ բնթերցվածքներ, այն է 1. Սաղմոսներ, 2. Շարականներ, 3. Քարոզ, 4. Աղոթք, 5. Ավետարան, 6. Ընթերցվածք (առհասարակ ժարգարեութիւններից և Առաքելական թրդթերից): Այս վեց մասերը զանազան շարքով և փոխ առ փոխ հաջորդում են իրար: Արանից երեքը (Սաղմոսներ, Ավետարաններ և Ընթերցվածք) բոլոր քաղված են Ս. Գրքից, ուստի բուն Մաշտոցից մնում են աղոթքները, քարոզներն ու շարականները, որոնք բոլորն էլ, առանց բացառութիւն, ունեն հետոսկեղարյան լեզու: Նրանց համար, որ դիտեն խտրել սակեղարյան հայերենը հետոսկեղարյան հայերենից, այս հանգամանքը րավական է հաստատելու համար, թե Մաշտոցը չի կարող երբք Ս. Մեսրոպի գործը լինել:

§ 4

Միսարանից հետո գալիս է Շարականը, որից «Ապաշխարութեան» կոչված շարականները ավանդութիւնամբ Մեսրոպին են ընծայվում: Այս շարականները սկսվում են Մեծ Պահոց առաջին օրից և գնում են մինչև «Կանոն վեցերորդ կիրակէին», առանց հաշվելու Ղազարու հարութիւն և Ավագ շարաթու շարականները, որոնք մեծագույն մասամբ տրվում են Սահակին: Մեսրոպին ընծայված այս մասը բռնում է 1861. թվականին էջմիածնում տպված Շարականի 117—224 էջերը, այն է 107 երես, իսկ հետը հաշվելով նաև Սահակին ընծայված մասը, այն է մինչև Ջատիկ, ընդամենը 162 երես (էջ 117—279):

Ամենահին վկայութիւնները, որ կարող ենք գտնել մեր մատենագրութիւն մեջ ի

հաստատութիւն հիշյալ ավանդութիւն, են նախ բուն իսկ շարականների հորինման «Օրհնութիւնարեք» կոչված ցուցակները և իրկորդը՝ Կարապետ Սասնեցին: Արանից առաջինները հետևյալ լակոնական տեղեկութիւններն են տալիս մեզ. «Ջապաշխարութեան հարցներն և զտէրյերկնցներն Մեսրապ վարդապետն ասաց» (ձեռագիր էջմիածնի Կարինյան № 1588, էջ 221բ, Շարական ԺԳ դարից):— «նախ մեծն Մեսրոպ զկարգն ապաշխարութեան և Սուրբն Սահակ զԱսագ շարթուն» (Կարինյան № 1468, «Գր. Տաթևացույ Մեկնութիւն եկեղ. աղօթից», էջ 37բ և Կարինյան № 851, Աստուածաշունչ, էջ 300ա):— «Ջապաշխարութեանն և Ղազարուն, զԱսագ շարթուն Մեսրոպ վարդապետն է ողեայ» (Գևորգյան № 704, «Քարոզգիրք Յովհաննու Երզնկացույ», էջ 31ա):— Վիեննայի Մխիթարյանց № 209 ձեռագիր Շարականում (գրված Խալատուրի ձեռքով 1312 թվականին), էջ 23բ, ասվում է «Կանովն Ապաշխարութեան», լուսանցքում՝ Մեսրոպ վարդապետի ասացեալ» (տե՛ս Տաշյան Յուցակ, էջ 523բ):— Արանց հակառակ Սարգիս երեց՝ գրիչ Շարականի՝ «Ապաշխարութեան կարգ»-ից Մեսրոպին է ընծայում միայն շարք-երը և «Տէր յերկնից»-ները, իսկ «Ողորմէք»-ը թե՛նի վարդապետին՝ ԺԲ դարից (տե՛ս Սահակ վարդապետ Ամատունի, «Պարականոն շարականներ», էջ 81): Այսպես էլ Ավետիքյան, «Բարդատրութիւն Շարականաց», Վենետիկ, 1814, էջ 156, ասում է, թե «Ջկարդ շարականաց Ապաշխարութեան բստ ութ ձայնից ասեն արարեալ Ս. Մեսրոպայ... օրինակ ինչ՝ Շնորհալույն ներսէսի ընծայի զերիս ձայնս»:

Կարապետ Սասնեցին, որ նույնպես ԺԲ—ԺԳ դարի հեղինակ է, Ապաշխարութիւն շարականների հորինման համար մի քիչ ավելի մանրամասն է՝ համեմատութիւնամբ առաջիններին: Նա պատմում է, թե այս շարականները գրեց Մեսրոպ՝ Ասորիքից վերադարձին, Բալուի քարայրում ճգնած ժամանակ, Մեծ պահոց յոթը շարաթներում: «Կրկին նորողըր զպահան և զաղօթսն, բնթանալով զառ ի վեր ընդ ափունս Եփրատայ, յայրէ յայր անցանելով մինչև ի զղեակն Պալունհաց և անդ զկայ առնոյր ի փոքրագոյն այրի յաւուրս քառասնորդացն. և զնթն ութնեակսն անսուաղ անցուցանէր զտիւ և զգիշեր, երգելով զերգս երից մականցն, և շարաբան եղանակ ապաշխարութեան՝ բստ թուոյ աւուրց պահոցն, զոր ընկալիալ երգէ եկեղեցի սուրբ» (Սասնեցի, էջ 43):

Տեսնում ենք, որ վերի տեղեկութիւնները իրար հետ համաձայն չեն. ոմանք Մեսրո-

պին եւ վերագրում Մեծ պահոց ամբողջ 7 շաբաթվա շարականները, ուրեմն նաև Ղազարու հարության և Ավագ շաբաթվա շարականները. այսպես է նաև Սասնեցիին (տղևթն եւթնեակսն): Բայց ուրիշներ վերջիններ տալիս եւ Սահակին, Մեսրոպին պահելով միայն 6 շաբաթվա շարականները: Ուրիշ հեղինակներ էլ նույնիսկ 6 շաբաթվա շարականներից շատերը վերագրում են տարրեր հեղինակներին: Դժբախտարար շունենք Շարականի քննական պատմությունը, այն զանազան կարծիքները, նրանց հեղինակները և ունեցած արժանիքը ցույց տալու համար, էլքմածնի միաբան հայտնի շարականագետ Սահակ վարդապետ Ամատունին, որ ըստ կարելիության հավաքել էր շարականների մասին գտնված բոլոր ավանդական տեղեկությունները, տվել էր ինձ հետևյալ տեղակը, ուր տեսնվում է, թե ամբողջ Մեծ պահոց բնթացքում երգված շարականներից ո՞րը ո՞ր հեղինակին է ընծայված.

- \*1. Շարականը առաջին շաբաթու—Որ հայիս քաղցրութեամբ.— Մեսրոպ.
- 2. Շարական Ս. Թէղորոսի—Որ ընտրեցեր ի սկզբանէ.—?
- 3. Կանոն Բ կիրակէին Աղուհացից—Որ գորչն սրբութեան պահոց.— Շնորհալի:
- \*4. Կանոն Բ կիրակէին Աղուհացից—Ձանուն քո Քրիստոս, օրհնեմք.— Մեսրոպ:
- 5. Շարական Ս. Կիրղի Երուսաղեմացոյ— Մանկունք նոր Սիոնի.—?
- 6. Կանոն Գ կիրակէին—Օրհնեմք գթեզ, անսկիզբն Հայր.— Շնորհալի.
- \*7. Կանոն Գ կիրակէին—Օրհնեմք, Տէր Աստուած հարցն մերոց.— Մեսրոպ.
- \*8. Կանոն Գ կիրակէին—Հարցն մերոց օրհնեմք ես, Տէր.— Մեսրոպ.
- 9. Կանոն Դ կիրակէին—Որ արարեր զօրութեամբ.— Շնորհալի.
- \*10. Կանոն Դ կիրակէին—Փառաւորեմք անուն քո յաւիտեան.— Մեսրոպ.
- \*11. Կանոն Դ կիրակէին—Սուրբ Աստուած, Հայր անսկիզբն.— Մեսրոպ.
- 12. Կանոն սրբոց քառասնից մանկանց—Այսօր ընդ անմարմնոցն.— Անանիա Շիրակացի և ներսես Շնորհալի փոխ առ փոխ.
- 13. Կանոն Ե կիրակէին—Որ պատուիրան ճշմարտութեան.— Շնորհալի.
- \*14. Կանոն Ե կիրակէին—Հարցն մերոց Աստուած, որ ապրեցուցեր.— Մեսրոպ.
- 15. Կանոն Ս. Գրիգոր Լուսաւորչի—Այսօր զուարճացեալ ցնծայ.— Յովհ. Երզնկացի.

- 16. Կանոն Ս. Գրիգոր Լուսաւորչի—Լեռինք ամենայն, այսօր ցնծացէք.— Յովհ. Երզնկացի.
- 17. Կանոն Ս. Գրիգոր Լուսաւորչի—Որ ի Հօրէ առաքեալ արեգակն.—?
- 18. Կանոն Զ կիրակէին—Որ զխորհուրդ քո զայստեանդ.— Շնորհալի.
- \*19. Կանոն Զ կիրակէին—Աստուած հարցն մերոց, ողորմեալ.— Մեսրոպ.
- \*20. Կանոն Զ կիրակէին—Օրհնեմք Տէր Աստուած հարցն մերոց.— Մեսրոպ.
- 21. Կանոն յարութեան Ղազարու—Այսօր զոյով ի Բեթանիա.— Ս. Սահակ.
- 22. Կանոն Մաղկազարդի կիրակէին—Որ վերօրհնէս յաթոս.— Ս. Սահակ և ն. Շնորհալի.
- 23. Կանոն Մաղկազարդի կիրակէին—Թագաւոր զոյով քո յաշխարհ.— Ս. Սահակ.
- 24. Կանոն Աւագ երկուշաբաթի—Անեղն ի Հօրէ ձնեալ որդի.— Ս. Սահակ և ն. Շնորհալի.
- 25. Կանոն Աւագ երեքշաբաթին—Իմաստուն կուսանքն պատրաստեալ.— Ս. Սահակ.
- 26. Կանոն Աւագ չորեքշաբաթին—Որ յաթոս փառաց բազմեալ.— Ս. Սահակ.
- 27. Կանոն Աւագ հինգշաբաթին—Վերածողն երկնից մշտնջենաւոր.— Ս. Սահակ.
- 28. Կանոն Աւագ ուրբաթուն—Այսօր ի կատարումն աստուածային.— Շնորհալի.
- 29. Կանոն Աւագ ուրբաթուն—Արծաթսիրութեամբն մոլեալ.— Ս. Սահակ.
- 30. Կանոն Աւագ ուրբաթուն—Այսօր անճառ.— Շնորհալի.
- 31. Կանոն Աւագ ուրբաթուն—Նորոգող տիեզերաց.— Ն. Շնորհալի.
- 32. Կանոն Աւագ շաբաթուն—Պարզևատուն ամենեցուն.— Ս. Սահակ և ն. Շնորհալի.
- 33. Կանոն Աւագ շաբաթուն—Յարեալ Քրիստոս ի մեռելոց.— Անանիա Շիրակացի: Ուրեմն ըստ այս ցուցակի, ավանդությունը Մեսրոպին է վերագրում ինչ շարական, այն է 1, 4, 7, 8, 10, 11, 14, 19 և 20 թվերը (ամեն մի շաբաթվա համար մի կամ երկու): Եթե քննենք այս շարականները լեզվական տեսակետով, ոչ-ուկեղարյան նշաններ շատ կգտնենք: Ահա մի հասարակ ցանկ այդպիսի բառերի.

անխմանալի 119.  
 աստուածարանելով 124, 187.  
 անբաժանելի 125, 145, 147, 219.  
 ամենարաական 146.  
 անքննելի 148.  
 անտանելի 155.  
 անյաղթելի 167.  
 ամենասուրբ 167, 219.

անբաւելի 167.  
 ամենակարող 172.  
 անհասանելի 193, 220.  
 անեղ 194, 220.  
 անկիզանող 194.  
 անսասանելի 196.  
 աններելի 213.  
 ամենամեղ 223.  
 զոյով 147, 170, 189.  
 զոհարանելի 132, 135.  
 երեքսրբենի 191.  
 երկնային 158.  
 երրեակ 190.  
 էակ 155.  
 էակից 170, 175, 215.  
 գի վերայ քրորէիցն 215.  
 կենցաղ 132, 171.  
 համուզոյից 119.  
 հրայացուցանել 119.  
 հրափորձութեամբ 124.  
 համածայնեալ 125, 155.  
 համարնակից 215.  
 հրեշտակային 187.  
 հրաշալի 154, 169, 193.  
 պարագրել 155.  
 սպասաւորել 192.  
 վերածագող 191.  
 վերառաքել 178.  
 վերերգել 157.  
 վերադուլել 155.  
 փառարանի 118.  
 փառարանել 122, 124, 165, 191, 218, 219.  
 փառարանութիւն 191.  
 փառակից 170, 171, 175, 218.  
 փառատրութիւն 148.  
 փոխարկել 154, 155.  
 օրհնարան 121, 135, 154, 155, 190, 193.  
 Շատ բանուկ է հատկապես բարեհիշ բար, որ զրեթե ամեն երեսում պատահում է և այն էլ մի-երկու անգամ:  
 Թե այդ բաղմամբի վարականները, որոնք համախմբված են Մեծ պահի օրերի թվով կանոնների մեջ, իսկապես մեր առաջին թարգմանիչն է հորինել, դրա մասին հավաստի ոչինչ չգիտենք. «Շարականների հեղինակների գրական գործերին քաջածանոթ զրիչները Ապաշխարութեան շարականները միաձայն ընծայում են Մեսրոպ թարգմանիչին... Իսկ չգիտեմ ինչ պատմական ազդեցությունների կամ ցուցումների վրա հիմնվելով, մեր Ժէ շարականի գրիչ Սարգիս երեցը Ապաշխարութեան կարգից թարգմանիչն է ընծայում միայն «Հարց»-երը և «Տէր յերկնից»-ները, իսկ «Ողորմէք»-ը՝ Բենիկ վարդապետին, որ ապրեց ԺԹ գարում. «Վարդաշխարութեան Հարցերն և զՏէր յերկնիցներն

Մեսրապ վարդապետն ասաց. զՈղորմէքը Ապաշխ [արութեան] Բենիկ վարդապետն ասաց». թղ. 223բ (Սահակ վարդապետ Ամատունի, «Ղին և նոր պարականոն շարականներ», էջ 91):

Վերևում գրածից պարզ երևում է, որ հետագա դարերի ավանդութիւնները Ապաշխարութեան կարգի շարականների հեղինակի մասին տատանվում են նույնիսկ եթե այդ կարգի շարականները միաձայն Ս. Մեսրոպին վերադրված լինեին, մենք չէինք կարող ընդունել ավանդութեան պատմական ճշմարտութիւնը, որովհետև Ս. Մարի առաջին երեսնամյակում կարելի չէ զննել հետագա դարերի այն սովորութիւնը, որով ամբողջ կանոններ էին գրում, կանոնի բոլոր սարքով, կանոնն առաջ է եկել է դարի վերջերում. ուստի մի թուրիմացութիւն է միայն ասել, թե «շարականներ գրելու կանոններին ծանոթ մի անձն՝ որպիսին Մեսրոպն էր, չէր կարող գրել Հարցերը, Տէր յերկնիցները և թողնել Ողորմէքը». այսինքն կանոնի մի մասը գրողը անպատճառ և մյուսը պիտի գրեր Ս. Մեսրոպի ժամանակ հենց այդ պահանջը չկար, ինչպես չկար նաև այն պահանջը, որ Ապաշխարութեան կանոնները լինեին Մեծ պահի օրերի թվով: Ուստի եթե Ս. Մեսրոպը հեղինակ է Ապաշխարութեան շարականների, նա առանձին երգեր միայն հորինած պիտի լինի և ոչ մի ամբողջական կանոն, և ավելի պակաս՝ մեծ թվով կանոններ: Կնշանակի մի պատմական հիմունք ունեն այն զրիչները, որոնք Ապաշխարութեան բոլոր կարգը միայն Ս. Մեսրոպին չեն վերագրում:

Ապաշխարութեան շարականներից դուրս կա նաև Քառասուն մանկանց շարականը, որ զրիչներից մեկը (անունը անհայտ) ընծայում է Մեսրոպին, ասելով. «Կանոնով Սրբոց Քառասնից. ասաղեալ Մեսրոպայ Տարոնեցույն. Այսօր ընդ անմարմնոցն զասպարհն»: Այս տեղեկութիւնը տալիս է մեզ շարականագետ Սահակ Ամատունին, իր «Ղին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ» աշխատութեան մեջ (Վաղարշապատ, 1911), էջ 66: Բայց միևնույն ժամանակ հեղինակը, գտնելով որ այդ շարականների մեջ կան Ս. Մարիի ոչ հատուկ անսովոր բարդ բառեր (ինչպես լուսապսակ, քրիստոսակիք, սառնապատ, եղկացուցանել, վերանորոգել, նախաբարտել, բոցաճաճանչ, վերակարգալ, վերերգել, ճոռագալթարձակ, հատապետ և այլն), հրաժարվում է Մեսրոպին հեղինակ ճանաչելուց, և նույն շարականը համարում է Անանիա Շիրակացու կամ Ստե-

փանոս Սեբաստացու գործը, իսկ Ավետիք-  
յան, «Քաջատրուժին շարականաց», էջ  
181, քսո կիրակոսի համարում է Շնորհա-  
լու գործը, բայց կասկածում է և զգում Սի-  
սիանոսի ազդեցությունը:

Մեսրոպին վերագրված շարականների  
հարցը փակելու համար, մեջ ենք բերում  
այստեղ Մ. Աբեղյանի («Արարատ», 1912,  
էջ 722, 724) պատվական ուսումնասիրու-  
թյունից մի քանի հատվածներ.— Գ և Ե դա-  
րերում դեռ լկային շարականներ. կային  
միայն փոքրիկ հոգևոր երգեր, Ութերորդ  
դարում հունաց մեջ կազմվեց կանոնը, այ-  
սինքն յուրաքանչյուր տոնի համար հնար-  
վեց ինը երգերի մի շարք՝ հավաքելով կա՛մ  
հեներից և կա՛մ նորերն ստեղծելով: Այս 9  
երգերի շարքը կոչվեց շարական: Այսպես  
ուրեմն շարականը ինքնին չի կարող ութ-  
երորդ դարից առաջ գոյություն ունենալ:  
Օրինակ՝ Մահակ Պարթևին են վերագրում  
Ավագ շարաթի կանոնները, իսկ Մեսրոպին՝  
Ապաշխարության կարգը: Բայց այդ կա-  
նոններից ո՛չ մեկը չի կարող ամբողջապես  
մի մարդու ասածը լինել: Նրանց երգերի  
մեջ մեծ տարբերություն կա թե՛ ձևի և թե՛  
բանաստեղծական ըմբռնման տեսակետից:  
Բայց որ գլխավորն է՝ հունաց մեջ անգամ  
կանոնները պատկանում են եկեղեցական  
բանաստեղծության զարգացման ավելի ուշ  
շրջանի: Նշանակում է, թե այդ կանոնների  
բազմաթիվ շարականները հետզհետե են  
հորինված և հետագայում, երբ կազմվել են  
կանոնները, վերագրվել են մի անձի՝ Ս. Սա-  
հակին կամ Ս. Մեսրոպին: Ե դարում, երբ  
եկեղեցու պաշտամունքի լեզուն հայանում  
էր և Ս. Գրքի սաղմոսներն ու օրհնություն-  
ները հայերեն էին թարգմանվում, անհա-  
վանական չէ, որ մի քանի հոգևոր երգեր էլ  
թարգմանվեին և կամ նրանց նմանողությամբ  
նորերը շինվեին: Բայց թե այդ երգերը կա՛ն  
և մանավանդ թե որո՛ւնք են, դեռ կարելի չէ  
իմանալ: «Մեր հոգևոր երգի սկիզբը հինգե-  
րորդ դարում դնելով հանդերձ՝ անհավա-  
նական է կարծել, թե այդ դարում մեծ օրհ-  
ներգություններ գրված լինեն, հունաց մեջ  
անգամ այդպիսի երգերը ծաղկում են ա-  
ռանձնապես վեցերորդ և յոթերորդ դարե-  
րում (էջ 724):

Մենք որոնեցինք, թե ո՞ր էջերում ավելի  
հազվադեպ են ոչ-սակեղարյան ձևերը և հե-  
տևաբար ո՛ւր կարելի է ենթադրել նախավոր  
հարազատադույն լեզուն Այսպես, գտանք,  
օրինակ՝ էջ 132—139, 144—153, 156—158,  
164—166, 216—217, 221—222, Համեմա-  
տարար լավ լեզվի ահա երկու հատված:

Այիք յանցանաց զիս ալեկոծեցե՛լ,  
Եւ մեղք իմ բազում զիս յանդիմանեց.  
Արդ զի՛նչ արարից մեղուցեալ անձամբս,  
Որ շեմ ալբիլոց յաճազեմ հռոյն:  
Մեղայի քեզ, Քրիստոս, Որդի Աստուծոյ,  
Շնորհեա գթողութիւն բազում յանցանաց  
իմոց: (էջ 218:)

Մեղուցեալ անձամբ կարդամ առ քեզ,  
Հա՛յր երկնատ,  
Օգնեա՛ ինձ ի նեղութեանս, որ մեղոօս եմ  
մեռեալ, օգնեա՛ ինձ:  
Վիրատեցեայ ես յաներևայր քշնամույն,  
բժիշկ երիանդաց.  
Բժշկեա՛ զիմ զգնիանդութիւնս, որ մեղոօս  
եմ մեռեալ:

Մուտեցայ ես քոպէս գոշխար կոռուսեալ,  
խնարդ գերելոց,  
Խնդրեա՛ զիս գմուտեալս, որ մեղոօս եմ  
մեռեալ: (էջ 220):

Իրաց արդի վիճակում շարականները չեն  
կարող Մեսրոպինը համարվել:

§ 5

Հինգերորդ աշխատությունը, որ Մեսրոպին  
է ընծայվում, է Ս. Ներսեսի պատմությունը,  
որի ամբողջական խորագիրն է «Յաղագս  
զարմից Սրբոյն Գրիգորի Հայոց Լուսաւոր-  
չի և Պատմութիւն Սրբոյն Ներսեսի Հայոց  
Հայրապետի»: Այս աշխատությունը հրա-  
տարակված է վերջին անգամ Վենետիկ,  
1883, «Սուփիքք»-ի 2 հատորով, ուր բռնում  
է 9—124 փոքրադիր երեսները: Գրքի վեր-  
ջում կա ճշգրտակ հիշատակարան, ուր ո-  
րոշակի հայտնված են գրքի հորինման պա-  
րտոաներու: Հրատարակիչները այս հիշա-  
տակարանը հանելով բուն գրքի մարմնից,  
դրել են էջ 138—139 ծանոթություն մեջ, և  
այն էլ հասպատմամբ: Ահավասիկ այդ հիշա-  
տակարանը, ինչպես տպված կա այստեղ  
«Ի ՆժՁ(=967) թուականիս Հայոց և ի վերա-  
դիտողութեանն Տեառն Վահանայ Հայոց կա-  
թողիկոսի, և յամս Աշոտոյ Բագրատու-  
նոյ Հայոց թագաւորի ի տանէն Շիրա-  
կայ, ես Մեսրոպյ Նուաստ քահանայ ի  
Վայոց ձորոյ ի գեղչէ Հողոցմանց, ուս-  
տի Յովսէփ էր հրանելի նահատակն  
յաւուրս Սրբոյն Վարդանայ... մեծ ցան-  
կությամբ ծաղկաքաղ արարի զգիրքս զայս  
ի Հայոց մնացորդաց յԱրեւելից գրոց-  
յաղթութիւն և զվատթարութիւն թագաւո-

1. Բայց հենց այս շարականի և «Մով կենցաղոյս»-ի  
համար տեսն՞ք, թե ի՛նչ է ասում շարականագետ  
(ո՛վ) ԴԴԴ, «Արարատ», 1912, էջ 1015. «Այդ երգերը  
պարզապես շարականների զարգացման լետին դարե-  
րի են. այդ բանին վկայում է և դրանց յափրս:

րացն Հայոց և Վրաց, և զառաքինութիւն և զսքանչելիս հայրապետաց տոհմից Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, և զտեսիլ և զկտակ Սրբոյն Ներսեսի, և զքաջութիւն և զյաղթութիւն արքայական ազգին Մամիկոնէից: ... Եւ արդ զայս հանեալ յԱրեւելից գրոց ի Հայոց մնացորդացն պատմութեանց, և ետու որդիացելոյ իմոյ սուրբ աւագանին ծնընդեամբն, Վահանայ Մամիկոնենոյ, ի գիւղն որ կոչի Վարժիս:

Ավելի պարզ ու բացահայտ բան քան այս հիշատակարանը՝ չգիտեմ թե ի՞նչ կատող է լինել: Հեղինակը ասում է, թե ինքը Մեսրոպ երեցն է Հոգոցմանց զուղից, որ ժ դարում ծաղկաքաղ է արել Արբահամ Խոստովանողի Մնացորդաց պատմութիւնը: Այս բացարձակ հայտարարութեան դեմ, հրատարակիչները, էջ 137, ծանոթութեան մեջ ասում են, թե Ս. Ներսեսի վարքի նախկին հեղինակը Ս. Մեսրոպ Մաշտոցն է, կամ նրա աշակերտներից մեկը և թե Ս. Մեսրոպ գրել էր Ս. Ներսեսի վերջին աղոթքն ու զուշակութիւնները: «Կամ սա (Ս. Մեսրոպ) ինքնին գրեաց նախ զվարս մեծի քահանայակոթին, և կամ պատմեաց մանրամասն, և մի ոմն յաշակերտաց նորա ելելի ի գիր: Բայց հաւանազույն է թէ ինքնին զլեւտին բանս Սրբոյն նշանակեալ էր գրով, զազօթան ասեմ և զզուշակութիւնսն, որք ապա փոխեցան ի գիր», նույն գաղափարը հայտնած էր տարիներ առաջ նաև Հ. Մ. Ավգերյան, «Եկեղեցատար վարք սրբոց», Ե, 1813, էջ 282: Բայց այսպիսի մի ենթադրութիւն անհիւս համար Վենետիկցի շուրջն ուրիշ ապացույց, եթե ոչ Ս. Մեսրոպի անվան հիշատակութիւնը Ս. Ներսեսի պատմութեան մեջ, էջ 83 և 110: Զարբհանելիան, որ առհասարակ շատ դյուրահավան հեղինակ է, որ Հայոց դպրութեան պատմութեան մեջ մասամբ ընդունում է այս ենթադրութիւնը, եթե որեւէ զորութիւն ունենար, ճիշտ հակառակը պիտի ապացուցեր: Մենք վերը (զլուխ առաջին) տեսանք, թե Մեսրոպի քարտուղարութիւնը Ներսեսի մոտ՝ կեղծիք է, միայն հետնաբար ձևացած. ուստի կեղծիք է նաև Ներսեսի մահվան ժամանակ ներկա լինելով վերջին աղոթքները գրի առնելը: Բուրա՛նդ, որ առհասարակ ամեն բան մանրամասն պատմում է, Ս. Ներսեսի վերջին րոպեներին ներկա է դնում (Ե իդ) Փավստոս եպիսկոպոսին, Տրդատ զխաւոր պաշտոնեից, Մուշեղ սպարապետին, Հայր մարդպետին, եկեղեցականներ ու նախարարներ, առանց հիշելու Մեսրոպի անունը, որ անկարելի է թե չհիշեր, եթե իրոք ներկա լիներ: Գմուռնանք նաև այս պարագան, որ եթե Ս. Մեսրոպ որեւէ մասնակցութիւն

ունեցած լիներ հիշյալ աշխատութեան մեջ, անպատճառ պիտի հիշվեր Մեսրոպ երեցի հիշատակարանում: Վերջապես այսպիսի մի երևելի բան Կորյուն կամ Մեսրոպի կենսագիրներից մեկը անշուշտ, գոնե ակնարկութեամբ հիշելու էր:

Թե Ս. Ներսեսի պատմութիւնը չի կարող Մեսրոպի աշխատութիւնը լինել՝ կա այս մասին մի ուրիշ զվարճալի ապացույց էլ:

Ինչպես Թորոսյան («Բազմավիպ», 1932, էջ 263) ցույց է տվել (թեև բոլորովին ուրիշ նպատակով), Ս. Ներսեսի պատմութեան մեջ ինչպես որ կան զանազան հատվածներ Բուզանդից փոխ առած, կա նույնպես մի հատված, որ փոխ է առնված Կորյունի գրքից:

Այս հատվածը հետևյալն է.

Կորիւն, էջ 14—15

Պատմութիւն Ներսէսի, էջ 83

Ամենայն կրթութեամբ հոգևորացն զանձն տունեալ... Եւ զանձն տունեալ, բարգում անգամ զհրեշտակական հանգիստ գիշերոյն և զհարկ քնոյ յոտնաւոր տքրթեան՝ ի թոթափել ական վճարէր. և զայն ամենայն առնէր ոչ սակավ ժամանակս:

Ամենայն կրթութեամբ հոգևոր իրաց զանձն տունեալ, բարգում և անհեշտական իրաց և անհանգիստ գիշերոյն և զհարկ քնոյ յոտնաւոր տքրթեամբ ի թոթափել ական վճարէր, ոչ սակավ ժամանակս, այլ յոյլովս:

Կորյուն իր գիրքը գրել է ամենաշուտը 443 թվականին. Մեսրոպ մեռել է 439 թվականի սկիզբը. ինչպե՛ս կուզեք, որ Մեսրոպ իր մահվանից հինգ տարի հետո գրված մի գրքից բանագողութիւններ աներ:

§ 6

Վեցերորդ աշխատութիւնը, որ Մեսրոպին է ընծայվում, այլևայլ թղթերի մի հավաքածու է. այս մասին րոտ բավականին տեղեկութիւն է տալիս մեզ Կորյուն, էջ 21 և Փոքր Կորյուն, էջ 19: Ահա մասիկ հիշյալ հատվածները. «Այս յետ դարձեալ՝ այնպիսի առաւել և բարձրադոյն վարդապետութեամբ՝ սկսեալ երանելոյն Մաշթոցի ճառս յաճախագոյնս, դիրքապատումս, շնորհադիրս, բազմագիմիս ի յուսաւորութենէ և ի հիւթոյ գրոց մարգարէականաց կարգել և յօրինել, յի ամենայն ճաշակօք աւետարանական հատուոյն ճշմարտութեան: Յորս բազում նմանութիւնս և օրինակս ի յանցաւորացս աստի, առաւելագոյն վասն յարութեանական յուսոյն առ ի հանդերձեալսն՝ յերիւրեալ կազմեալ, զի հեշտրնկալք և դիրքահասոյցք ախմարագունիցն, և մարմնական իրօք զրադելոյն լինիցին, առ ի սթափել և զարթուցանել և հաստահիմ առ ի խոստացեալ աւետիսն քաջայերել» (Կո-



րապես շեշտում է մեծելոց հարուստի ճանաչումը։ Վարդապետության մեջ էլ մեծելոց հարուստի ճանաչումը մասնավոր տեղ է գրավում իր ընդարձակությամբ, բազմապիսի բանաստեղծական փոփոխություններով և այլն։

դ. Շահապիվանի ժողովի կանոնների նախերգանքում Մեսրոպի համար սավում է «հոգեկից և հոգեծիր ճշմարտասէր վարդապետին Մեսրոպայ, որ լուսաւորեաց զերկիրն Հայոց վարդապետութեամբ իւրովս» (հրտ. Ղուեճյան, էջ 57)։ Կորյուն էլ իր աշխատության սկիզբը ասում է. «և վասն նորինս զլուսաւոր վարդապետութեանս»։ շեղատառ տպված բառերը կարող են նույն վարդապետությունը ակնարկել։

ե. Պրոկղ և Ակակ հայրապետներին գրված պատասխանը, որ Մեսրոպի աշխատությունն է, վարդապետության ինչ-ինչ մասերի համառոտությունը լինելով, բանավոր է ենթադրել, թե Մեսրոպ իր աշխատությունը ինքն իսկ համառոտել է։

զ) Եզնիկ երեց, որ ըստ Չ. Սարգիսյանի Եզնիկ Կողբացին է, իր համառոտ գրության մեջ Մեսրոպի համար խոսելով, ասում է. «եւ կարգք դործոցն Գրիգորի նորոգեալ արամբ միով իրանելեա Տարօնացոյ, որում անուն Մասրովբ ճանաչէր»։ Գրիգորի նորույալ դործը կարող է Մեսրոպի վարդապետությունը լինել։

Այս պատճառարանությունները դժբախտաբար բոլորովին անզոր են ապացուցանելու համար հեղինակի առաջադրությունը։ Հակառակ իրեն կա այնպիսի հզոր մի փաստ, որի առջև վերի առարկությունները ոչինչ են. և այս փաստը վարդապետության լեզուն է։ Առակաց գիրքը, որից մի փոքր հատված բերինք մենք իբր նմուշ, բավական է ցույց տալու, թե Մեսրոպի լեզուն պատկանում է Ե դարի առաջին դարոցին. մինչդեռ վարդապետության լեզուն, իբր ճոխ, պերճ ու շոսյլ լեզու, պատկանելով շրջորդ դարոցին, չի կարող գրվածքը Մեսրոպինը համարվել (Նորայր, «Կորյուն վարդապետ և նորին թարգմանությունը»)։

Հաջորդ հատվածը, որ քաղում ենք վարդապետության սկզբից, ընթերցողը կարող է համեմատել Առակաց գրքի հետ, իսկույն տեսնելու համար երկուսի միջև եղած հսկայական վանազանությունը։

«Տէր Աստուած, որ նա միայն ինքնութեամբ, և յառաջ քան զնա շիբ ոք այլ արարիչ ամենայնի որ երկի և որ ոչն երկի, բայց Որդին Միածին որ ի Չօրէ ծնեալ, և Նույն նորուն որ ի նորին յէութենէ՝ որով եղև աշխարհս ի սկզբանց անդ, արարեալ միասնական Երրորդութեանն միով զօրութեամբ կամացն ամենազօրաց. միախորհ, միա-

կամ, միաբուն ինքնութեամբ. և ամենայն ի նմանէ եղեալ՝ երկինք և երկիր։ Արարեալ զերկինս խորանարդ հաստայարկ, և զերկիր թանձրատակ աղխեալ սեղմեալ. և զերկինս կախեալ զոչընչէ, և զերկիրս ի վերայ ոչնչի կացուցեալ. և ի նմին զանդունդս համատարածս յաւարագածս աներևոյթս անկազմս անարարս և անյարգարս, անպատրաստս ստուերամասս... Ասացեալ ի Չօրէ առ խորհրդակատարսն համագործս՝ լինել լոյս, և անդէն եղեալ լոյսն համասփիւռ խաւարակուլ օրաբեր։ Եւ յետ այսորիկ հաստատութիւն ջրամած սառնեղէն ծովահեթը ջրարածին. որով երևեալ ցամաքն ամենածին ծաղկարուխ տնկարեր։ Եւ յետ այսորիկ ասացեալ միասնական Երրորդութեանն՝ լինել լուսաւորացող առ ի ջրեղէն խորանանման հաստատութեան Երկնին ճառագայթածիքք, աշխարհագունդք, նշանացոյցք և զեռնոց և ջրածին կայտառաց» (Ազաթ., տպ. Քիֆլիս, 1883, էջ 153—154)։

Չարմանալի է, որ Սարգիսյանի ենթադրությունը առանց այլևայլի ընդունում է նաև Ակինյան, «Ճանդես ամսօրյա», 1935, էջ 544։

Մառ («Մկրտություն Հայոց, Վրաց, Արխագաց և Ալանաց», Վաղարշապատ, 1911, էջ 97) կարծում է, թե ամբողջ Ազաթանդեղոսը Մեսրոպի գործն է։ Մի այսպիսի միտք հայտնել է նաև Աղոնց («Ճանդես ամսօրյա», 1928, էջ 91), Մառ ենթադրում է մի քանի տեսակ Ազաթանդեղոս. ա) Ուղղափառ հունասեր խմբագրություն (Գ դար). բ) Քաղկեդոնական խմբագրություն (է—Ը դար), որից թարգմանված է հունարեն և սրանից էլ արարեբերը. գ) Աղզային հայկական խմբագրություն (Ը դար), որից թարգմանված է արդի հունարեն օրինակը։ Առաջինը Մառ վերագրում է Մեսրոպին, հիմնվելով Եզնիկ երեցի ծանոթ վկայության վրա՝ «կարգք գործոց Գրիգորի նորոգեալ արամբ միով երանելեա Տարօնացոյ, որում անուն Մասրովբ ճանաչէր»։ Բայց Եզնիկ երեց «կարգք» ասելով ո՛չ թե Գրիգորի գրվածքն է հասկանում, այլ քարոզչական գործունեությունը, որ իրոք էլ նորոգեց Մեսրոպ, արժանանալով «Երկրորդ Լուսավորիչ» անվան։ Համենայն դեպս կարելի չէ Ազաթանդեղոսը տանել է և Ը դար, որովհետև լեզուն Ե դարի է, և այն էլ շրջորդ դասից։

§ 8

Մինչդեռ Չ. Ս. Սարգիսյան Ս. Գրիգորի վարդապետությունն է համարում Մեսրոպի ճառերի հավաքածուն, հայագետն Ֆեթթևր («Ճայագիտական աշխատություններ», էջ 69—78) ուզում է ապացուցել, թե Կորյունի հիշած սույն հավաքածուն «Գաճախապա-

տումն է՝ Այս գիրքն էլ երկար ժամանակ անտեղի կերպով համարված էր Ս. Գրիգոր Լուսավորչի հեղինակությունը:

Այս մասին տեղից տվողը նույնիսկ Ագաթանգեղոսն է, որ Գրիգոր Լուսավորչի համար ասում է. «Այս յես այսպիսի գործոց սկսեալ երանելոյն Գրիգորի ճառս յաճախագոյնս, դժուարապատումս, առակս խորմացս, դիրալուրս, յարմարեալ ի զօրութենէն և ի հիւթոյ գրոց մարգարէականաց, ի ամենայն ճաշակօց կարգեալս և յարմարեալս...» և այլն: Այս խոսքից հետևեցրել են իսկույն, որ Հաճախապատումը Լուսավորչինն է: Այսպես, Նարեկացին կոչումներ է անում իր «Երգ երգոց»-ի մեկնութեան մեջ (Գրիգորի Նարեկացւոյ Մատենագրութիւնք, Կենետիկ, 1840, էջ 335 և 342) Հաճախապատումի ժԹ և Ի ճառերից (տե՛ս Հացունի, «Բազմավեպ», 1930, էջ 401):

Գրիգոր Մազիստրոս իր «Մեծ են գործքս աշխատութեան մեջ (էջ 72) Լուսավորչի համար ասում է. «Զգիրսն իւր հաւատոյ Յաճախարանն որ անուանին» Եվ դեռ այսպես էլ կարծվում է մեր անքննադատ շրջաններում: Յեթթներ նախ ապացուցում է, թե այս բանը անկարելի է, որովհետև ա) Ս. Հոգու բնութեան նկատմամբ հրամանակարգ վարդապետութեան ձևն այնպես է, որ հազիվ կարող ենք ենթադրել Լուսավորչի բերնից դուրս եկած: բ) Հեղինակի լեզուն, ինչպես իր բովանդակ աստեղանց կերպը ցույց է տալիս, 381-ի Կոստանդնուպոլսի ժողովի վարդապետական որոշման ժանտեղիքուն է ենթադրում: գ) Ս. Գրքից բերված վկայությունները այնպես համաձայն են մեր այժմյան թարգմանությունը, որ գրություն ժամանակը լի կարող Ե դարից առաջ լինել:

Սրանից հետո Յեթթներ անցնում է ապացուցել թե Հաճախապատումը գրված պիտի լինի Ե դարում և թե սրանից ավելի ուշ չի կարող լինել: Իր ապացույցներն են, նախ՝ հեղինակի այն ձգտումը, որով նա ուզում է զրադաշտականութեան հետ մաքառել: բ) Փաղկեղոնական վեճերին բուրրովին անմասն է մնում, որով ցույց է տալիս, թե 451 թվականից առաջ է գրված: գ) Արշակունյաց հարստութեան հիշատակությունը այնպիսի ձևով է, որ ենթադրում է այս հարստութեան անկումը Արտաշես Գ-ի օրով: Այսպիսով Հաճախապատումը գրված պիտի լինի Ս. Գրքի երկրորդ թարգմանության և Փաղկեղոնի ժողովի միջև եղած ժամանակամիջոցում: «Բայց ճիշտ այս ատեն կայրեր ու կգործեր

Ս. Մեսրոպ, որուն նկատմամբ կայատմե յուր կենսագիրը Կորյուն, թե քաղում թուղթս խրատական և զգացուցիչս բնդ ամենայն գաւառս առաքէր»: Զինքը պետք ենք ուստի հեղինակ ճանչնալ այս ճառերուն»:

Այսպես է փաստարանում Յեթթներ: Բարի ցանկությունից ավելի բան չկա այստեղ, Հաճախապատումը Մեսրոպին տալու համար:

Յեթթների քննությունը, եթե իր ստույգ բնույթները, որոշում է միայն այն ժամանակը, երբ գրված պիտի լինի Հաճախապատումը: Բայց թե այս գրվածքը լի կարող Մեսրոպինը, ո՛չ էլ առաջին թարգմանիչներից որեէ մեկինը լինել, բավական ցույց է տալիս Հաճախապատումի լեզուն, որ այնպես հստակ կերպով զանազանվում է առաջին թարգմանիչների լեզվից: Հաճախապատումը հայտնի հունարան լեզվով չէ, ուստի իրոք լի կարող է դարում կամ ավելի հետո գրված լինել, բայց այնպես նման է երկրորդ թարգմանիչների լեզվին, մասնավորապես Ղազարի և նրա ընկերների լեզվին, որ պետք է հաստատ կերպով ընդունել, թե նրանցից մեկի աշխատությունն է:

Երկար կլինի մանրամասն ցույց տալ այն ներքին հատկությունների շարքությունը, որով օժտված պիտի լինեն ամեն Ոսկեդարյան գրվածք: Բայց ավելորդ չենք համարում նաև արտաքին հատկություններից բառական մասը նշանակել: Հաճախապատումի մեջ հարյուրներով կարելի է հաշվել ոչ-ոսկեդարյան բառեր: Ահավասիկ նրանցից մի ցուցակ (էջերը նշանակված են էջմիածնի 1894 թվականի տպագրության համաձայն).

- ա. անհպելի 11, 13.
- անփոփոխելի 13, 69.
- ամենասուրբ 14.
- անասանելի 18, 22, 33, 37, 92, 126.
- աղբիւրարար 20.
- աներկբայ 22.
- ապերախտիսն 23.
- ամենառատ 24, 30.
- անմեղկելի 24, 45.
- աւարտի 32.
- անգոյ 49.
- անբեւելի 50, 106.
- առանձնաւորութիւն 55.
- անճառելի 55, 78, 82, 94, 107, 141.
- անլիշալար 56.
- անհատ 82.
- անճառայէս 82.
- անմեկնելի 89, 107, 113.
- անըմբռնելի 97.
- անուշահոտանայ 100.
- անլիշելի 101.
- անպատմելի 113.
- անասելի 113.

1 «Ճաճախապատում»-ը թարգմանված է գերմաներեն և հրատարակված «Regensburg»-ում, քննութեամբ Յեթթերի և Հերշլի, որոնք այս գիրքը Մեսրոպի աշխատությունն են համարում:

անլսելի 113.  
անանցանելի 115.  
անզրօս 122.  
անդրդունլի 126.  
աննախարար 135.  
առիթ 140.  
բիրակերպարաննալ 8.  
բարեզործող 29.  
բարեխոնարհութիւն 41.  
բացահայտել 47, 97, 149.  
բնաւորեցան 48.  
բարեխոնութիւն 51.  
բաւականացի 68.  
բաղձալի 108.  
բարեխորհրդութիւն 124.  
զոյացուցանել 27.  
զոյացութիւն 29, 58.  
զուլով 39.  
զործարան 145.  
երևութանայ 48.  
երկաքանլիւրոց 50, 70.  
երկրայիլ 117.  
երկրպագեն 144.  
զամենայնս 39.  
զանադանութիւն 40.  
զարտուղի 101.  
զանազան 111.  
ընդունակ 44.  
ընդունարան 141.  
ժառանգորդ 42.  
իւրաքանլիւրոց 41, 44, 46, 111.  
խորհրդածութեամբ 17.  
խոհականութիւն 83.  
կենդազավարեալք 13.  
կենսագործել 15, 58, 63.  
կցորդակից 18.  
կերպութիւն 100.  
հրահանգել 19.  
հակամիտիլ 52, 80, 106.  
համանգամայն 118.  
համահամ 131.  
ճակատամարտիլ 130.  
մեղերբ 97.  
մտառութիւն 48.  
յառաջադայիլ 57, 100, 139, 141, 143.  
ի յախտեանցն 43.  
նորածնելոց 17.  
ներգործութիւն 29.  
ներգործել 33.  
ի նոյնս 39.  
նախկին 57.  
նախախնամական 90.  
նախաշավիղ 119.  
շրջապատել 126.  
ունայնարանութիւն 22.  
ողջախոհանալ 102, 104.  
պարփակիլ 56.  
պիտոյանայ 69.

պիտոյացեալ 70.  
սաղարթ 126.  
սրբապէս 190.  
վերաբերեալ 34.  
վերաբերիլ 94, 95, 144.  
վերազրել 131.  
վերաստեղծու 143, 226.  
վերափոխել 37.  
փարթամութիւն 29.  
փառարանիլ 91.  
փառարանութիւն 191.  
փառակից 144.  
փրկաւտ

քաղաքայլ 31.  
բ. Բազմայիլ են նույնպես սեռականի հակադիր գործածութեան օրինակները, որոնք թեև անսովոր շեն Ոսկեդարում, բայց շափազանցութեամբ ներքիլ չէ. ինչպես՝ զգեցցի զանմահութեան կենդանի լուսովն, զգեցեալ զկենտրաբի զարեգականն արդարութեանն զլոյսն, որ լին է հրանութեամբ, նորա փառօք կարող է...» և այլն (էջ 8):  
գ. Հիշելու համար նաև բանասիրական պատճառարանութիւն, կարող ենք նկատել, որ Հաճախապատումի մեջ կան բազմաթիվ բանազոդութիւններ Յզնիկի գրքից՝ ահավասիկ սրանցից մի քանիսը.

Յանախապատում  
էջ 1—2

Լի կատարեալն, որ զամենայն շնու, և ինքն ոչ թերանայ և ոչ նորոգի, զի ոչ հնանայ և ոչ յնու, զի ոչ պակասի. Զի ինքն նոյն է ի իրութեան իւրում և յամբաւութեան. և շիք ուստեք եկամուտ կամ յաւելուած, յայն յանբաւ և յանսահման, և յանհաս և ի կատարեալ բարեբարութիւնն:

էջ 3

Եւ ոչ արար զարարածս անկազմն և անարգս, այլ նտ անձնիշխան և աղատ կամս... որ կոչեացն զնոսս յոչնչէն ի լինչսն և ի շոյէն ի զոյն:

Սզնիկ  
էջ 8

Եւ ինքն կայ լի և յանսպառ կենդանութեան... և ինքն ոչ թերանայ ի զարացուցիլ զարութենէն.

էջ 6

և ոչ բնութիւն հիւթարեբ ի պէտս նորա և ոչ նիւթ ինչ յորմէ առնիցէ զոր առնելոց իցէ:

էջ 24

Իսկ եթէ երբեք հիւզն անզարդ և անարդ և անկերպարան... (էջ 7) զի ածն ի շոյէն ի զոյն զշոյնս, և եցոյց յոչնչէ լինչ զլէսն:

էջ 27

Ջոր յոչնչէ և ի շգոյէ գոյացոյց. գհոգեորս և զմարմնաւորս, զշնչաւորս և զանշունչս: ... Եւ զոր արար կենդանիս և անմահս, մտաւորս և բանաւորս, որ ևն գունդք հրեշտակաց և երկնաւոր դօրք, որ կարգեալ ևն ի պատի, և ի պաշտօն և յանդադար փառաբանութիւն ամենագօր տէրութեան:

էջ 29

Որ առ դարման և առ բժշկութիւն կագմեցան, կարգեցան ըստ ներդրութեան Աստուծոյ... է ինչ և ի սողունս իրաց ինչ ի պէտս որպէս յօժեցն ասէ զկիրաչէն:

էջ 31

Չի շուրճ ի պէտս կենդանեաց արարան յԱստուծոյ, որ արբուցանեն զերկիր և դարձեալ ապականին նեխելով և նուազեցով: Եւ հուր առ ի պէտս մեր արարաւ, որ դարմանօք վատի և սպասաւորէ մեզ և ի պակասել կերակրոյն, շիջանի և ապականի... Երկինք յուսաւորօք և երկիր կենդանեօք և բուսովք և տնկովք և ամենայն ձեռակերտօք արուեստից, որ ստեղծանեն պատկերս յարարածոց Աստուծոյ աստուածս, սուտ ևն և ապականին, որպէս իմաստնող է րաջայայտ:

էջ 7

Ձի ածն ի շգոյէ ի գոյ զշգոյսն, և եցոյց յոչնչնէ յինչ զչէսն... (էջ 9) զբանաւորս և զանբանաւորս, զմտաւորս և զանմտաւորս, զխօսունս և զանխօսունս, զասունս և զանասունս... (էջ 13) զբանաւորսն աներեւոյթս... զհրեշտակաց ասեմ և զհոգւոց մարդկան... (էջ 14) և զսպասաւորութիւնն՝ յոր կարգեցան, անդադար մատուցանեն... փառաւորեմք զկարդիշն նոցա և զյօրինիշն...

էջ 83

Նահ նովին իսկ, որ շարքն կարծիցին անմտաց, երբեք օգտակարք լինին և զերծուցիչք ի մահուանէ: Ձի՛նչ շարքան զօժ կայցէ, և ի նմանէ թիրիակէ:

էջ 16

Կամ զըւրս՝ զոր հանապազն ըմպեմք, և զանուշութիւն նոցա ի ժանտահոտութիւն ի փորի մերում գարցուցանեմք... (էջ 15) Եւ կամ զհուր, որում և զքեզ իսկ երկրորդ արարիչ կազմեաց յօրինիշն, զի յորժամ կամիցիս՝ վառիցես և յորժամ կամիցիս՝ խափուցանիցես... (էջ 10) Եւ այսպէս, շորեքին բնութիւնքն, ուստի աշխարս կագմեայ և կայ, առանձինն՝ ապականիչք ևն միմեանց, և խառնեալ ընդ ընկերին՝ օգտակարք և շահատրք: Եւ զի այս այսպէս է՝ ամենեցուն յայտնի է որ կամին ուսանի:

էջ 31

Արարածք ևն Աստուծոյ և յուսաւորք արեգակն և լուսին և աստեղք ամենայն, իւրեանց փոփոխմամբն ցուցանեն զիւրեանց սպասաւորութիւնն ըստ սահմանելոյն այլ ևս արարածոց:

էջ 31

Որպէս ձմեռն ոչ միայն զովացուցանէ, այլ և սպանանէ. և ամառն ոչ միայն ջեռուցանէ, այլ և խորշակահար առնէ. և հուր ոչ միայն ջեռուցանէ և զպէտսն լնու, այլ այրէ և ասպականէ. և շուր ոչ միայն արբուցանէ զերկիր, այլ և ողորդէ և վնաս առնէ: Այսպէս և ամենայն դարմանքն...

էջ 33

Ձի եթէ ոչ էր ահ Տեառն ի վերայ մեր, ամենեքեան զմեզ սատակէին:

էջ 34

Ձի և զազանք ոչ եթէ բնութեամբ եղեն շարք, որպէս ընդելութեամբն ցուցանեն օժք առ թովիշսն. և առիւծ և ինձ և արարածք հնադանդին մարդկան, որպէս եղեն իմա՛ եզն) և շուն և այլ ամենայն որք ընդ լծով անկանին և շողոքորթին, և առանդնդուն զազանան, և մահ գործեն անծանօթիցն և վէրս:

էջ 11

Ձշարժունսն... արբանեակսն... զնաւունսն... քանզի և նոքին իսկ իւրաբանիւր փոփոխմամբք յայտ առնեն, եթէ է ոմն՝ որ փոփոխէ գնոսա:

էջ 10

Արեգակն թէ բարի է առանց օդոյ խառնուածոյ այրիչ և ցամաքեցուցիչ է. նոյնպէս և լուսին խոնաւական բնութիւն, առանց խառնուածոյ ջերմութեան արեգական, վնասակար և ապականիչ է. և շուրք զհոգ երկրի ողորդանեն և ապականեն... և այսպէս շորեքին բնութիւնքն...

էջ 16

Ձի թէ ոչ սաստարարչին նահանգէր զնոսա, մի մի ի նոցանէն րաւական էր զամենեսին սատակելու:

էջ 68—69

Այնչափ ինչ շար ի զազանացն բնութեամբ ոչ գոյր... զքարս իգակերպս կալեալ թովութեամբ յընտելութիւն մարդկան ածեն... և միւսն զառիւծու կորիւն սնուցեալ՝ ածէ ի համրոյր և ի քծինս, մինչև պատել զսնուցանելեան, և եթէ այլ ոք ի նա հուպ գայցէ, շմոռացեալ զքարս զազանութեանն՝ ի վերայ յարձակի. և նորա սաստեալ զազանին իրր շան, ցուցանէ յանսաստ գազանութեանէն:

էջ 37

Որ յունչէ ի լինելութիւն էա՞ծ և ի չգոյնէ ի գոյն:

էջ 7

Չի ա՞ծն ի չգոյնէ ի գոյն զչգոյն և ևցոյց յունչէ զլէսն:

էջ 228

Ի սատանայ ի սկզբանն ոչ թշնամի տրարաւ, այլ յանձնիշխան կամացն եղև հակառակ բարոյ. զի ըստ երբայցեւոց բառիցն հակառակ թարգմանի:

էջ 52

Չի սատանայ մեր ոչ յԱստուծոյ սատանայ եղևայ գիտեմք, այլ դաստան անուն՝ վասն խոտորելոյն էա՞տ իւր անունքանգի սատանայ յերբայցեւոց և յաստուրոց լեզուէ խոտորեայ թարգմանի:

Պետք է ասել, թե հիշյալ մի քանի հատվածները դեռ չեն կարող ցույց տալ այն հզոր ազդեցությունը, որ Նզնիկը գործել է Հաճախապատումի վրա. հարկավոր է կարգալուծել հատվածներից առաջ և հետո եղած մասերը, զգալու համար, որ Հաճախապատումը ծայրեծայր Նզնիկ է բուրում. Այս զգալությունը այնքան մեծ է, որ նորայր (սկզբին վարդապետ և թարգմանությունը նորին», էջ 54, ժան.) այն կարծիքն է հայանում մինչև անգամ, թե Հաճախապատումը նախապես եղել է Ոսկեդարյան դործ, բայց հետին մի խմբագրի ձեռքով այնքան է խանգարվել, որ գործել է հետ-ոսկեդարյան աշխատություն:

Որովհետև Նզնիկ ավելի առաջ է քան Հաճախապատումը (և այս բանը հաստատվում է Ոսկեդարյան լեզվի պատճառով), ուստի պետք է որ Հաճախապատումը լինի բանաբաղը և ոչ Նզնիկ, ինչպես կարող է Մեսրոպի աշխատությունը լինել այն, երբ այս դեպքում պետք լինի ենթադրել, թե Մեսրոպ իր աշակերտի գրվածքից բանագրություններ է արել:

Յեթթերի հետ կարծեկից դուրս եկավ վերջին անգամ Յեսայան, որ նախ «Անահիտ», 1905, էջ 242 և հետո Կորյունի իր քննական հրատարակության մեջ (Երուսաղեմ, 1930, էջ 51 և 86—88) նույնպես Հաճախապատումը համարում է Մեսրոպի գործը: Ազգաբանոցը սակայն հատվածը, որի վրա հիմնվելով Հաճախապատումը վերագրում են Գրիգոր Լուսավորչին, գտնվում է նաև Կորյունի մոտ, որ մենք էլ մեջ բերինք: Յեսայան ցույց է տալիս մանրամասն, որ բանաբաղը Ազգաբանոցից է և ոչ Կորյուն. հետևաբար այն

հատվածը բնապես Կորյունին է և վերագրում է Մեսրոպին. որիչ խոսքով այժմահագոյն» ճառերը Մեսրոպին են: Բայց սրանով ոչինչ չապացուցվեց. ցույց արվեց միայն, որ թե՛ Գրիգոր Լուսավորիչ և թե՛ Մեսրոպ ճառեր են գրել, և այն էլ «այժմահագոյն»: Ուրեմն ո՞ր որ այժմահագոյն ճառեր գրած լինի, «Յաճուխապատում»-ը նրանք կլինի:

Մենք խոսեցինք արդեն Հաճախապատումի լեզվի հետնություն մասին և ցույց տվինք, որ ես ծ դարից չէ և չի կարող ծ դարի սրևէ հեղինակից լինել: Նույնը կրկնում ենք այստեղ: Մենք ցույց տվինք այն բազմաթիվ բանաբաղությունները, որ Հաճախապատումը արել է Նզնիկից և անհարմար դասանք, որ Մեսրոպ իր աշակերտից այգայսի լայն շարհերով օգտված լինի: Նույնը կրկնում ենք այստեղ: Հաճախապատումը Մեսրոպից չէ և չի կարող լինել: Մեղ հետ կարծեկից է նաև 2. Վ. Հացունի, որ «Բազմավեպ», 1930, էջ 401—406 մի առանձին հոդվածի մեջ քննում է Հաճախապատումը և տարբեր պատճառաբանություններով մերժում է վերագրել թե՛ Լուսավորչին և թե՛ Մեսրոպին, այլ ծ դարի կրկնորդ թարգմանիչներից մեկին:

S 9

Վերոհիշյալ ճառական գրվածքներից դուրս հաշվել պետք է նաև այն բազմաթիվ նամակները, որ Մեսրոպ իր կյանքի վերջին օրերին ուղարկեց Հայաստանի դանադան գավառները: Այս նամակներն էլ բնույթը խրատական էր. «Եւ մինչդեռ այնպէս մերձաւորացն աւիրել զհոգևոր եռանգն ածէր, անդէն ի նմին ամի՛ յետ ամսոց վեցից անցելոց վախճանի երանելոյն Սահակայ...» (Կորյուն, էջ 26): Դժբախտաբար բոլոր այս թղթերը, իբրև հովվական ժամանակավոր նշանակություն ունեցող, կորուստի անգունդն են մատնված. որովհետև օրինակներով տարածվելու կամ պահվելու համար չէին:

§ 10

Բայց ժամանակը ավելի խնայող է եղած այն թղթակցության համար, որ տեղի ունեցավ Պրոկղի, Ակակի, Սահակի և Մեսրոպի միջև, և որոնց ծանոթացանք վերը ընդարձակ մեջբերումներով:

Այժմ անցնենք քննել վերոհիշյալ հինգ թղթերի վավերականությունը: Առաջին երեք թղթերը իրոք ծ դարի ոսկեդարյան մի գրչի թարգմանությունն են և վերջին երկու թղթերն էլ Սահակի կամ մանուկանդ Մեսրոպի գրություններն են:

Որպեսզի այս թղթերը Սահակինը կամ Մեսրոպինը և կամ գոնե ժամանակակից մեկինը լինեն, հարկ է որ լեզուն, որով գրված են նրանք, ոսկեգարյան դրոշմը կրել, Դժվար է ոսկեգարյան մի գրվածք հետոսկեգարյան գրությունից զանազանել լեզվից դատելով: Առանց ի նկատի առնելու գրվածքի ոճը, մի քանի բառ կամ բարդություն և ածանցման ձև, որ հակառակ են Ոսկեգարի ոգուն, իսկույն մատուցում են գրվածքի հետնությունը: Եվ ընդհանրապես: Այս տեսակետով եթե քննենք այս թղթերը (մանավանդ առաջին լորսը), պիտի տեսնենք ազատ այնպիսի թեթևություններից, բոլորն էլ կրում են պարզ և ընտիր հայերեն դրոշմը, հետո դատարկ ավելաբանությունից, և զարդարված այնպիսի թեթևաշիկ բառերով, որոնք իսկույն Եզնիկը, Ոսկեգարինը կամ Սեբեքիանոսն են հիշեցնում: Բառեր և դարձվածներ, որոնք հատուկ են Ոսկեգարին, գտնում ենք մեր ամեն քայլին. «Եղեալ վասն մեր մարդ առանց յջելոյ և անկանելոյ և խախտելոյ յիրոյ աստուածային (!) ինքնութենէն...ի մէջ անբաժին ծորորութեանն բաժին արկանեն... զնորակեցտ զնորաձայն զայս ասն զնոր ընդունայն հայհոյութիւնսն... անցանեն զանցանեն ըստ նոցա հայհոյութիւնսն... Մշակք նենգատրք կերպարանեալ կերպարանեալ պաշտօնէից Թրիստոսի... Ձոր օրինակ անց անցանիցեն ընդ քաղցր բիր բոյսս արտոցն... և զտապ տառապոյն (?) հասկալից բուսոցն ի շերմախառն յանբարևխառն օդոցն իրովն քաղցրութեամբն յատողչութեան բժշկութիւն դարձուցանելով... մանաանդ զվնասակար նօտարան նորաձայն զհերահոյութիւնս, զոր այլանդակաշատ ամբարշտութիւն տակաին դարս դառնութեան սերմանցն ցանէ ի վերայ սրբութեան սերմանեաց որովնախառն ուսումն, որք ի հաճեառավօսս սատանայախառն սովորեալ են... և նկրտին ըմբռնել զանհաս զառանց ըմբռնելոյն (հետոսկեգարյան հայերենով պիտի ասենք զանհասանելիք և զանըմբռնելիք)... հասանել անհաս շափուցն ժպրհեն... ի մէջ միջնածողով ժողովրդոց գխայն կանգնեաց (բարդության երկու կեսերը առանձին կրկնված, ոսկեգարյան ձև)... որ զանեղծ և զանարատ հաւատն յապակեութիւն դարձուցանել ջանան... և սրբոյ զանառ վանդեն ծորորութեանն քննութիւն՝ ջանան ընդ յնդիր արկանել... ընդունել պատիժս պատուհասի... և զզայթակցութիւն գայն ի միջոյ ի բաց կորուսանել... և այլն և այլն:

Ճշմարիտ է, թե այս գրությունաց մեջ կան ինչ-ինչ անհարթություններ, բայց սրանք էլ հայտնի է, որ գրիչների անձնությունյան արդյունքն են: Արգարեն, Առիբրքի մեջ հրատարակված թղթերից առաջինը (Սահակի պատասխանը Պրոկղին) շատ ավելի լի է այսպիսի անհարթություններով, քան նույնի հրատարակությունը «Գիրք թղթոց»-ի մեջ: Ուրեմն վերջինը ավելի հարազատ օրինակից է քան առաջինը: Լավագույն մի օրինակ կարող է մնացյալ անկանոնություններն էլ հարդարել:

Ապացուցանելուց հետո, թե հիշյալ գրությունները ոսկեգարյան են, այլևս ավելորդ կլինի կասկածել նրանց վավերականության վրա: Ոսկեգարի շրջանը այնպես կարճ է, որ Սահակի ու Մեսրոպի մահից քիչ հետո հերջանում է, և այս կարճ ժամանակում ո՛ւմ է՞ ու պետք Սահակի և Մեսրոպի անունով թուղթ կեղծել:

Ձարմանալի է սակայն հինգերորդ թուղթը (Սահակի պատասխանը Ակակին): Այս թուղթը, ինչպես տեսանք, ուրիշ քան չէ, եթե ոչ չորրորդի անփոփոխ արտագրությունը, տեղ տեղ կրճատված, Սահակի նման բաղձարեղուն մի անձ, հետն էլ ունենալով մի Մեսրոպ կամ մի Եզնիկ, եթե պետք զգաց Ակակին պատասխան գրելու, չէ՞ր կարող մի նոր քան գրել. ի՞նչ կարիք կար նախորդը համառոտելու և նոր հասցեով ուղարկելու: Բացի սրանից, Ակակին ուղղված այս պատասխանը, իր այնչափ համառոտությանը մեջ անգամ, ընծայում է հետին հայերենի շատ հետքեր: Օրինակ՝

ա. Առաջինը գրում է «ի հանճարավնաս սատանայախառն սովորեալ են», ուր շեղատառը ոսկեգարյան մի սիրուն բարդություն է. երկրորդը քանդելով այս բարդը, դարձնում է «որ ի հանճարավնաս սատանայախառնման ուսեալ սովորեալ են». այսպիսով դուրս է զալիս, որ սատանան է հանճարավնաս, մինչդեռ Սահակի միտքը այլ է. նաև առաջինի մեջ սովորեալ բառով հասկացվում է «վարժված», մինչդեռ երկրորդը սովորիլ առնելով «ուսանիչ» մտքով, պետք է զգացնել սատանան էլ բացառականի վերածելու:

բ. Առաջինը գրում է. «Արդ, սրովհետև մոյարն առաջին և զխաւորն ի շարիս զիր ժանդ աղտեղութեանն կարկառեալ սերմանել ժպրհեցաւ»: Այս շատ հասկանալի խոսքը խանգարվում, դառնում է «Արդ, սրովհետև մոյարն առաջին զխաւորսքն շափ զիր ժանդ աղտութիւնն սերմանել ժպրհեցաւ», որից ոչինչ չի հասկացվում:

գ. Առաջինը գրում է. «նկրտին ըմբռնել զանհաս զառանց ըմբռնելոյն», որի մեջ շեղատառ բառերը հարազատ ոսկեգարյան են. երկրորդի մեջ եզրվելով դառնում է «նկրտին ըմբռնել զանըմբռնելիք»:

դ. Առաջինը գրում է «ի բաղում կիզմանն դարութեանն զզգայութիւնսն կորուսեալ է» (այսինքն այրվածքի սաստկությունից զլուծությունը կորցրել է). երկրորդում դասնում

լ. «ի սաստիկ կիզմանը ընկղմին միտքն ի թմբիրն խելագարուրևան» (վերջին բառը ոսկեզարյան չէ):

Ե. Առաջինը գրում է. «Ձի ոչ ինչ է այդ դիտութիւն (տպված է «այլ տգիտութիւն»), այլ խաւար խորհրդեան». իսկ երկրորդը դարձնում է «քանզի ոչ գոյ այլ գիտութիւն խաւարայնոց» (շեղատառ ոսկեզարյան չէ):

գ. Առաջինը գրում է. «Ընդ միտս իրեանց խորհել աներկիւղութեամբ և անամօթութեամբ, դամօթ իրեանց լրբութեամբ յայտնուպէս պատմեն». երկրորդը հետին բառերով՝ «աներկիւղաբար անամօթաբար գլրբութիւնս իրեանց յայտնադէս պատմեն»,

է. Առաջինը մի անդամ դործածում է «պատիւ պատուհասի» սեռականով ավելագրուիլունը. «ե մեծամեծ պատիւ պատուհասի տունկ ո՛չ դանդաղիմք». երկրորդը անգամ նույնը կրկնութեամբ՝ «մեծապէս (մեծամեծ?) պատմի, և պատուհասի մեծապիս վրէժ ինդրեացեն». իսկ երկրորդը շնչելով սյս բոլոր դարգերը, ասում է պարզապէս. «ընդ մեծ պատմովք արկանել ոչ դանդաղիմք... մեծապէս պատուհասի զվրէժն խնդրիցեն»:

Այս բոլոր խանդարմունքը ինչի՞ համար է:

§ 11

Վերը ասացինք, որ Զամչյան Պատարագամատուցն էլ վերագրում է Սահակի և Մեսրոպի գործակցութեան: Ուրիշներ Պատարագամատուցը տալիս են Լուսավորչին, այսպէս հենց Զարրհանայան, «Հայկական հին դպրութեան պատմութիւն», Գ տպ., էջ 280, որ սակայն նույն Պատարագամատուցի վերջում տրված աղոթքը համարում է «Մեսրոպայ վարդապետի»:

Հիշենք վերջին անգամ Եվսերիոսի նկեղեցական պատմության թարգմանությունը, որ թեև Մեսրոպի աշխատութեան արդյունքը չէ, բայց հորենացու պատմության համաձայն՝ կատարված է Մեսրոպի անմիջական հրամանով, ասորերեն լեզվից. «և՛ վկայ քեզ ի

մօտոյ երաշխատրեսցլ Եկեխաստէ զիյր Եւսերի Կեսարացոյ, զորս Լու թարգմանել երանելի վարդապետն Մաշտոց ի հայ լեզու (հորենացի, Թ ժ):

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

1. Մեսրոպի առաջին գործն է Առակայ գրի յարգմանությունը. որ և հայ գրականության առաջին երկն է:— 2. Միայ է այն տեղեկությունը, թե եւ թարգմանել է նաև ամբողջ Ա. Իբրեր Սամուսատում:— 3. Ումանել կարծում են, թե եւս ենք էլ նաև Մաշտոցը կամ Միսաբանը. բայց դա Թ դարի Մաշտոց կարողիկոսի խմբագրությունն է:— 4. Ո՛րչա չէ նույնպէս այն կարծիքը, թե իբրեն են պատկանում նաև Ապաշխարության շարականները:— 5. Շատ սխալ է դարձյալ այն, որ իբրեն են համարում Ս. Ներսեսի պատմությունը, որ ժ դարում գրել է Սեսրոպ Երեցը:— 6. Ստույգ է, որ Մեսրոպ գրել է մի խումբ խրատական նաոեւ, բայց թե հասել են մեզ դրանք՝ հայտնի չէ:— 7. Սխալ է կարծել, թե այդ նաոեր Ագաթանգեղոսի Վարդապետությունն են կամ թե նույնիսկ Ագաթանգեղոսի ամենահին խրատագրությունը. լեզվի տարբերությունը չի բույլ տալիս բնղունել նման կարծիք:— 8. Ավելի սխալ է կարծել, թե այդ նաոերի հավաքածուն Հանախապատումն է, որ ոսկեդարյան լեզու չունի:— 9. Ստույգ է, որ Մեսրոպ իր վերջին օրերին գրել է խրատական րդրեւ, բայց դրանք չեն հասել մեզ:— 10. Վավերական են Պրոկղի և Ակակի րդրեր և եւսնց պատասխանը Սահակից ու Մեսրոպից:— 11. Մեսրոպի առաջաբերությանը է կատարված նվերիտի նկեղեցական պատմության թարգմանությունը ասորերենից»:

(Շարունակելի)